Երեսներորդ տարի № 36 18 Սեպտեմբերի 1888

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՐԱԿԷ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է ՀԵՆԴ րուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔ»-ի խմբագրատանը և Կենտրոնական Գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Редакція „Аргаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների բաւին 2 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորին վեհափառութեան Թիֆլիզ ժամանելը։ Պատապարտելի վարմունք։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութեան այցելութիւնը Նորին Վեհափառութեան։ Հայոց հեգ. բարեգ. ընկերութեան ուսումնարանի բացումը։ Խերսոնի արքեպիսկոպոս Նիկանորի նկատողութիւնները։ Կօլիւբակենի զեկուցումը։ Հայերէն ներկայացում։ Ներ. դպրանոցի տեսչի վերաբերմամբ։ Տարօրինակ տրամաբանութիւն։ Մի ակամայ պատասխան։ Հազար բամբասանքին մէկ պատասխան։ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։ Կրօնի դասագրքեր։—ՓԻԼԻՏՕՆ։ Բողոքական առաքելութեանց գործունեութիւնը Ասիական Տաճկաստանի Հիւսիս—հարաւային կողմերում։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻԶ ԺԱՄԱՆԵԼԸ։

Ամսոյս 15 ին Թիֆլիսի Հայ Հասարակութիւնը բաղդ ունեցաւ դիմաւորելու ամենայն Հայոց կաթողիկոսին։

Արդէն մի ամբողջ ամիս է, որ լսվում էր, թէ Նորին Օծութիւնը այս տարուայ աշնանը մտադիր է այցելել իւր սիրած Հօտին։ Այս լուրն իրականութիւն ստացաւ, երբ ամսոյս 11 ին Թեմիս սրբազան Առաջնորդը, Թիֆլիսից ուղևորուելով, շտապեց դիմել Հայրապետին մինչ իւր թեմի սահմանը.—մինչև Դիլիջան։ Շորեքշաբթի օրը լուր տարածուեց քաղաքիս ազգաբնակութեան մէջ, թէ Վեհափառ Տէրը ժամանելու է քաղաքս Հինգշաբթի առաւօտեան, ժամի 8-ին, և ահա այդ կանուխ ժամին, Թիֆլիսի երկաթուղւոյ կայարանը արդէն լի էր դիմաւորող Հասարակութեան բազմութեամբ։ Բայց այդ միջոցին հեռագիր ստացուեց, որ Նորին Օծութիւնը Ազստաֆայից ուղևորուելու է միայն կէսօրուայ ժամի 12-ին և ժամանելու է Թիֆլիսի կայարանը 3 ժամից 3 րոպէ անցած։ Համաձայն սորա, ժամի 2-ից ոկսած, քաղաքիս երկաթուղւոյ կայարանում նորից համախմբուեցան՝ քաղաքագլուխը իւր պաշտօնակիցներով և քաղաքիս ձայնաւոր երէցփոխանններով, արհեստաւորաց վարչութեան անդամները, համքարները իրանց դրօշակներով, շրջապատած հասարակութեան խուռն բազմութեամբ։ Նշանակած ժամին Նորին Վեհափառութեան համար յատկացրած առանձին գնացքը մօտեցաւ կայարանին։ Հասարակութեան մէջ անմիջապէս տիրեց խորին լռութիւն և ամենեքեանք ակնածութեամբ իջեցրին գլխարկները։ Նորին Օծութիւնը, վայր գալով շոգեկառքից, բարեհաճեց ընդունել քաղաքագլխի և ոստիկանապետի շնորհակալութիւնները ողջամբ ժամանելու մասին և օրհնեց բազմութիւնը, որից յետոյ կայարանը թնդաց ժողովուրդի «կեցցէ Հայոց ազգի Հայրապետը» անվերջանալի աղաղակներով։ Այնուհետև սկսուեցաւ գնացքը, որին առաջնորդում էր ոստիկանապետը։

Վեհափառը ընթանում էր բաց կառքի մէջ, որի առաջ, ձի նստած, գնում էին երկու քահանայ, կրելով կաթողիկոսական խաչն և գաւազանը։ Կաթողիկոսական կառքին հետևում էին Ս. Էջմիածնից շնորհ բերած Սրբազան եպիսկոպոսների կառքերը և ապա բազմութիւնը՝ նոյնպէս կառքերով և ոմանք ձիաներով։ Ճանապարհին կուտուած էր ժողովրդի մեծ բազմութիւն, որ ակնածութեամբ ընդունում էր Հայրապետի օրհնաբեր ողջոյնը։ Ալէքսանդրեան այգւոյ առաջ, կամուրջի մօտ, արդէն սպասում էին գնացքին քաղաքիս բոլոր Հայ Հոգևորականութիւնը և մեր դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները։ Այստեղ Վեհափառ Հայրապետը, իջնելով կառքից, շուրջառ առաւ և խաչը ձեռքին մտաւ ամպհովանիի տակ, որ կրում էին քաղաքագլուխ պ. Մատինեանը, իշխան Կոնստանդին Բէհբուդեանը, իշխան Նապօլէոն Ամատունին և պ. Աբգար Յովհաննիսեանը։ Այ-

նուհետև Հոգևորականների դասը ընթացաւ դէպի Վանքի մայր եկեղեցին։ Առաջը գնում էին Ներսիսեան դպրոցի և միւս դպրոցների սանները լրանոց ուսուցիչներով և դաստիարակներով, ապա երգեցիկ խումբը, Հոգևորականների դասը խաչով և խաչվարներով և, վերջապէս, Վեհափառը ամպհովանիի տակ, խաչակնքելով և օրհնելով աջ ու ձախ շրջապատող ժողովուրդը։ Մտնելով Վանքի եկեղեցին և սովորական աղօթքը կատարելուց յետոյ, Վեհափառ Հայրապետը դարձաւ ժողովրդին, օրհնեց և բարեմախթեց կեանք Ոդոստափառ Կայսեր և Իւր պալատին։ Դուրս գալով եկեղեցուց, Հոգևոր Տէրը անցաւ երկու կարգ շարուած աշակերտների և աշակերտուհիների միջից և բարձրանալով վեհարանի սանդուխքի վրայ, նորից օրհնեց գաւթի մէջ խռնուած ահագին բազմութիւնը։

Մտնելով ապա վեհարանի դահլիճը, Նորին Ծոութիւնը բարեհաճեց ընդունել նահանգապետի պաշտօնակատար Իշխան Ջերվաշիձէի շնորհաւորութիւնը։

Երեկոյեան Վանքի եկեղեցւոյ պարիսպն և վեհարանը շքեղ կերպով լուսաւորուած էին և ժողովրդի մեծ քանակութիւն, մինչև ժամի 10-ը գիշերուայ, դբօսնում էր գաւթի լայնարձակ հրապարակում։

Յուրախութիւն մեր՝ Նորին Վեհափառութիւնը վայելում է քաջառողջութիւն և պատկառելի դիմաց գծագրութիւնը պահպանած է առաջուայ նման անթառամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամսոյս 17-ին առաւօտեան, ճիշդ 9 ժամին, Նորին Վեհափառութեան բաղդ ունեցաւ ներկայանալու Ներսիսեան Դպրանոցի Հոգաբարձութիւնը։

Վեհափառ Տէրը օրհնելով Հոգաբարձուներին, բարեհաճեց ակնարկել, թէ որպիսի յատկութեանց պէտք է համապատասխանէ Հոգաբարձութիւնը, որպէս զի արժանի լինի իւր կոչմանը։ Հայոց Կաթողիկոսը ներկայ րոպէին մեծամեծ և ծանր հոգսերով զբաղուած լինելով, կամեցաւ աւելացնել, որ կը հրամայէ Հոգաբարձութեանը աւելի ուշ ներկայանալ՝ Իւր քանի մի ցուցմունքները լսելու համար։ Այնուհետև Նորին Ծոութիւնը բարեհաճեց մատնանիշ անել, թէ որպիսի սերտ կապով միացած պէտք է լինի Դպրանոցը և նորա Հոգաբարձութիւնը Ս. Էջմիածնայ հետ, սրտառուչ կերպով բացատրելով նորա նշանակութիւնը, այն բարոյական աջակցութիւնը, որին այդ սուրբ վայրը կարօտ է Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ զաւակների կողմից։

***

Մեզ խնդրում են յայտնել, որ Թիֆլիզի Հայուհեաց բարեգ. ընկերութեան ձեռագործի և ձևի ուսումնարանը կը բացուի ներկայ Սեպտեմբերի 22-ին։ Ընդունվում են ծխական ուսումնարաններում ուսումն աւարտած օրիորդները։

***

Խերսօնի արքեպիսկոպոս Նիկանորը այցելելով անցեալ տարի իւր թեմը՝ Հոգևորականութեան և դպրոցների դրութեան հետ ծանօթանալու նպատակով, նորերումս հրատարակել է իւր հետազօտութեան արդասիքը, որի բովանդակութեան հետ, հետևելով «Նօվօստի» լրագրին, կարևոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին։

Իւր առանձին ուշադրութիւնը դարձնելով ժամասացութեան վերայ, նորին սրբազնութիւնը այն եզրակացութեանն է եկել, թէ դա միանգամայն անկանոն է։ Այսպէս՝ մի եկեղեցում «ժամասացութիւնը աւելի աղաւաղումն էր Աստծոյ բանի, քան պատարագ»։ մի այլ եկեղեցում նկատվում են շեղումներ եկեղեցական կանոնից։ մի երրորդում արքեպիսկոպոսը նկատել է, որ պատարագի մի մասը քահանայի «սեպհական շարադրութիւն է»։ մի չորրորդում գաւառական աւագ քահանան իւր յօրինած մի պատարագ է կատարում։ մի հինգերորդում երեկոյեան ժամասացութիւնը կատարում էր լոկ տիրացուն, և այնպիսի ձևով, որ արքեպիսկոպոսը անուանում է այդանգակ և սրբակատակութիւն։

Անցնելով հոգևորականութեան գործունէութեան՝ ազգային լուսաւորութեան ասպարիզում, արքեպիսկոպոսը աւելի հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում։ Մի ուսումնարանում աշակերտները չգիտէին, թէ ո՞ւր է խաչուած եղել Քրիստոսը և առաջարկած հարցին պատասխանեցին, թէ «Խերսօն քաղաքում»։ մի այլ ուսումնարանում երեխաները չէին զանազանում միմեանցից Փրկչի, Աստուածամօր և Աւետարանիչների պատկերները։

Գալով ժողովրդի մէջ քահանաների ձեռքով քրիստոնէական գաղափարներ տարածելու խնդրին, արքեպիսկոպոսը ամենամութ գոյներով է նկարագրում ժողովրդի դրութիւնն և քահանաների յանդգնութիւնը։

«Ընդհանրապէս, գրում է նորին սրբազնութիւն Նիկանօրը, տխուր է ռուսաց գործի դրութիւնը, մութն է մտքերի վիճակը, և առ այժմ արշալոյսը շատ հեռու է։»

*
* *

Անցեալ տարի վանի նախկին հիւպատոս պ. Կօլիւբակին ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնում կարդաց մի զեկուցումն բողոքական առաքելութեանց գործունէութեան մասին Ասիական Տաճկաստանի հիւսիս—արևելեան կողմերում։ Իր ժամանակին մենք պ. Կօլիւբակինի զեկուցման մասին տպեցինք համառօտ տեղեկութիւն, խոստանալով ապագայում լիովին տպագրել այդ զեկուցումը «Արձագանքի» էջերում։ Կատարում ենք մեր խոստումը, արտատպելով ներկայ համարից սկսած մեր հողևորականութեան համար վերին աստիճանի խրատական այդ զեկուցումը։

*
* *

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ամսոյս 14-ին յետաձգուած Հայոց ներկայացումն կը կայանայ այսօր կիրակի Սեպտեմբերի 18-ին Կոմմերչէսկի կլուբի թատրոնական դահլիճումը (նախկին Կրուժօկ). կը ներկայացնեն I. «Օրթաճալու քէֆը», վոդ. 2 գործ. Հեղ. Ս. Ս., II. Օսկան Պետրովիչը դժոխքումը, վոդ. 1 գործ., Հեղ. Գ. Սունդուկեանի։ Խաղամիջոցներում կը նուագէ զինուորական երաժշտական խումբը»։

*
* *

«Մշակը» մեծ գայրոյթով հերքում է Երևանից մեզ հաղորդած այն լուրը, որ այնտեղի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է նորից տեսուչ հրաւիրել Հ. Սարգիս Բէգնազարեանին։ Յարգելի թերթը միանգամայն անկարելի է համարում այդ բանը. ըստ երևոյթին, եթէ հայր Բէգնազարեանի տեսչութիւնը բեղմնաւոր է եղել Երևանում, յիշեալ մտադրութիւնը շատ բնական պէտք է լինէր. բայց հրևի «Մշակի» խմբագրութիւնը մեզանից աւելի քաջ է ծանօթ արժանապատիւ հօր գործունէութեանը Երևանում, որ այնքան եռանդով հաստատում է, թէ դա մի անկարելի բան է.... Այո, յառաջադէմ թերթը աւելի հեռու է գնում. նա պնդում է, թէ «մենք հաստատ գիտենք, որ Երևանի դպրոցի հոգաբարձութիւնը այդպիսի միտք երբէք չէ ունեցել։» Ասացէք, ի սէր Աստուծոյ, ինչտեղից կարող է դիտենալ «Համարեաթէ-ամենօրեայ» «Մշակը», թէ ինչ մտքեր չ'ունին Երևանի հոգաբարձուները, կամ թէ 300 վերստ տարածութեան վերայ ինչ ինքնագիտակ է կարդում այդ «տարածուած» լրագիրը ուրիշների մտքերը։

Այո, մեզ մնում է միայն զարմանալ և ասել՝ «այո, շատ բաներ կան աշխարհիս վերայ, սիրելի Հօրացիո, և այլն»։

Այնուհետև «Մշակի» 104 համարի փոքրիկ նկատողութիւնը, ի միջի այլոց, երկու մեծ սխալ է պարունակում իր մէջ։ Հեղինակն ասում է.

ա. «պ. Յովհաննիսեան և ընկ. աշխատել են, որ Բէգնազարեանը տեսուչ ընտրուի»։ Կարող ենք հաւատացնել «Մշակին», որ Յ. Բէգնազարեանը տեսուչ է նշանակուել, երբ մեր նուաստութիւնը գտնվում էր արտասահմանում։

բ. «Հոգաբարձութիւնը մերժեց Բէգնազարեանի հրաժարականը»։

Ահա իրողութիւնը. հոգաբարձութիւնը, կարդալով տեսչի հրաժարականը և լսելով երկու հոգաբարձուների մտքերը, որոնք, պատճառաբանելով կարծիքներ յայտնելով, պնդում էին, որ հրաժարականը պէտք է ընդունել, որոշեց՝ մի հոգաբարձուի առաջարկութեան համաձայն, հրաժարականի խնդիրը յետաձգել մինչև սեպտեմբեր, երբ թիֆլիզ կ'վերադառնան բացակայ հոգաբարձուները։ Հրաժարական չ'ընդունելու և նորա մասին դատողութիւնը յետաձգելու մէջ ահագին զանազանութիւն կայ։

Վերջապէս, «անմարդավարի կի չլինք, համա» մի նկատողութիւն պէտք է անենք 16 տարի գոյութիւն ունեցող թերթին. ոչ մի երկրի մամուլի մէջ ընդունված չէ մի քահանայի մասին խօսելիս tout court նորա ազգանունը յիշել։ Ձեր թերթի մէջ գրված է. «Բէգնազարեան տեսուչ ընտրվեցաւ», «Բէգնազարեանի հրաժարականը անկասկած (!?!) չի ընդունվիլ», «Բէգնազարեան վատ և վնասակար է» և այլն և այլն։ Պէտք է գրել՝ «արժանապատիւ հայր Բէգնազարեանը», «բարեկրօն քահանայ Բէգնազարեանը», «հայր Բէգնազարեանը» և այլն։

Բայց դուցէ այս ածականները նկատողութեան հեղինակը գործ չէ դրել՝ դրդուած համեստութիւնից դէպի իր անձը... այդ, ի հարկէ, այլ խնդիր է։

*
* *

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

—

Կան մարդիկ, որոնք մի առանձին ընդունակութիւն ունեն համալձակութեամբ այնպիսի նիւթերի մասին խօսել, որոնց հետ նոյն իսկ հեռաւոր ծանօթութիւն չունեն և խօսելիս՝ տպիտութեանը յատուկ յանդգնութեամբ՝ հեղինակօրէն դատապարտել նոյն առարկայի մասին ոյլ կարծիք ունեցողներին։ Այդպիսի մարդկանց համար «Պրշակը» միշտ սիրով բաց է արել իւր էջերը և այդպիսի ինքնավստահութեան, եթէ չասենք աւելի, մի օրինակ մենք տեսնում ենք այդ լրագրի սեպտեմբերի 13-ի համարում «Ձայնատուութեան սկզբունք» վերտառութիւն կրող յօդուածում։

«Պշակ» լրագիրը թէև ընդունում է, որ պ. Արասխանեանի մասին արած կարդադրութիւնը Նելսոնեան Պալրանոցի հոգաբարձութեան կողմից «ոչ յանկալի էր և ոչ էլ պէտք էր», բայց զինաւորվում է այն հանգամանքի դէմ, որ պ. Արասխանեանը իւր նկատմամբ կատարած անարդարութեան համար բողոքել է նորին վեհափառութեան առաջ, և զինաւորվում է այն պատճառով, որ հոգաբարձութիւնն իւր վճիռը պ. Արասխանեանի մասին դրել է քուէարկութեամբ և ձայների առաւելութեամբ և հետևաբար յիշեալ բողոքը խախտում է ձայնատուութեան սկզբունքը։

«Պշակի» թերուս դրողների կարծիքով «Ձայնատուութեան» սկզբունքը այն տեսակ սկզբունք է, որ եթէ «հօլլէգիանական» հիմնարկութիւնը նորա հիման վերայ մէկին ամեն տեսակ չարիք պատճառէ, սա պէտք է լուռ և մունջ տանէ այդ չարիքի բոլոր հետևանքները։ Այսպէս ուրեմն, եթէ «հօլլէգիական» նահանգական պատգարանը կամ պատասխանական պետերը մէկին իւր վճռով չարիք պատճառէ, նա պէտք է լուռ և բալձրագոյն ատեանին չը բողոքէ, որովհետև այս չարիքը «Ձայնատուութեան» սկզբունքի վերայ է հղած։ Եթէ աւելի մեծ և բազմանդամ «հօլլէգիական» հաստատութիւնները, որպիսիք են օրինակ քաղաքային «դուման» և «գեմսուվօն», իրանց վճիռներով մէկին վնաս պատճառեն, սա չը պէտք է բողոքէ նահանգական՝ այդ հիմնարկութեանց համար հաստատուած՝ ատեաններին, որովհետև դրանով խախտում է «Ձայնատուութեան» սկզբունքը։

Եթէ «Պշակի» յայտնի և անյայտ աշխատակիցները չը գիտեն, դոնէ պ. խմբագիրը չը պէտք է մոռանար, որ նաև տահմանադրական հիմնարկութիւններին, պարլամենտների, «Ձայնատուութեան» սկզբունքով կատարած վճռի դէմ կարելի է բողոքել պետութեան դլխին և եթէ սա դնէ իւր veto'ն, պարլամենտի ձայնատուութեամբ արած վճիռը չնչուած է համարվում։

Միմիայն տպիտութեան արդիւնք պէտք է համարել «Պշակի» «Ձայնատուութեան սկզբունքը» մանաւանդ յօդուածը և միմիայն հեղինակի տպիտութեամբ է բացատրվում այն կարծիքը, թէ պ. Արասխանեանը չը պէտք է պիտէր հոգաբարձութեան դէմ իւր բողոքով Պալրանոցի Ֆայրագոյն Իշխանութեան՝ իւր նկատմամբ կատարած անարդար կարգադրութեան համար։

«Պշակի» խմբագիրը, զինաւորուելով կուսակցութիւնների դէմ, իւր ամեն մի տողի մէջ մարմնացեալ կուսակցութիւն է ներկայացնում և այն որքան տպեղ, որքան չարամիտ. . .

***

ՄԻ ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ։

—

«Պշակի» աշխատակից, պարոն Խ. Մ. նեղացել է մեզանից, որ նորա յօդուածը մենք լրջութիւնից զուրկ ենք համարել և անպատասխան ենք թողել։ Նա կարծում է, որ մենք այդպէս վարուել ենք, որովհետև նա «քաղաքագետ» չէ։

Հաւատացնում ենք պարոնին, որ նա չարաչար սխալվում է. մենք նորան կատարեալ անպատրաստ ենք համարում այս բանավէճին խառնուելու ոչ թէ նորա համար, որ սեմինարիստ է նա. եթէ մենք լիշեցինք այդ բառը, պարոնի ինտզոսը, նա ինքը մեզ ստիպեց, ինքը մեզ տուեց այդ անունը՝ լսելով ցանկանալով մեզ։ Մենք աւելացրինք, թէ պատրաստ ենք և սեմինարիստի կարծիքը յարգել, եթէ այդ սեմինարիստը մաղու չափ ծանօթ լինէր այն հարցի հետ, որի մասին համարձակվում է վիճել։

Մենք նորա կատարեալ անպատրաստութեան հաւաստիացանք նորա «յօդուածներից»։ Մեր բարձրացրած բանավէճի խնդիրը, որ ստիպուած ենք կրկնել, բոլորովին անհասկանալի մնայ նորա համար։ Այդ բանավէճի նպատակն էր՝ պարզել մեր գրականական լեզուի պատմական զարգացումը, ցոյց տալ այն տեղերական օրէնքները, որոնցով զարգանում են բոլոր գրականական լեզուները, որոշել այն այժերը, որոնցից բաղկանում է մի կենդանի գրականական լեզու, պարզել այդ ուժերի ամեն մինի պաշտօնը և տեղը գրականական լեզուի մշակման հարցում. մենք աշխատեցինք պարզել, թէ «ձևակերպուել» է մեր գրականական լեզուն, ընդօրինակուել է օտար լեզու-

ներից, թէ ինքնուրոյն է զարգացել և զարգանում. վերջապէս, մենք աշխատեցինք պարզել՝ քերականութիւնը լեզուի օրէնքների ուսումն է, թէ տգիտութիւնից և կոյր համայականութիւնից թելադրուած անկանոնութիւնների ժողովածու։

Այս գլխաւոր հարցերն են մեր վիճելի առարկան և սորանցից է կախուած միւս բոլոր երկրորդական և երրորդական հարցերի լուծումը։

Այդ հարցերը անկարող է հասկանալ նա, ով գիտութեան հոտն անգամ չէ քաշել, նորա այբուբենին անգամ անծանօթ է։ Հէնց այդ պատճառաւ էլ, պ. Խ. Մ. որ ոչ գիտութիւն ունի, ոչ էլ լեզուներին տեղեակ է, անկարող եղաւ մեր յօդուածին պատասխանել, ասելով, թէ իբրև մութ և վերացական էր նա։

Մեզ ընդդիմախօսողը՝ չը նայած այդ ամենին, ցանկանում է անպատճառ սիրամարգի փետուրներով զարդարուել. ցանկանում է հաւատացնել ընթերցողին, որ նա տեղեակ է գիտութեան, լեզուների։ Բայց ոչ մի բան այնքան շուտ չէ մերկանում, որքան այն, երբ տգէտը ուզում է գիտուն հանդիսանալ. երբ իմաստակը ուզում է խելացի ձևանալ. կեղծը միշտ իւր մէջ պարունակում է կեղծութեան մերկացնող բոլոր տարրերը։

Խ. Մ. ուզում է ցոյց տալ, որ նա տեղեակ է հին և նոր լեզուներին. սակայն ինչ որ նա ասում է, սխալը սխալի վրայ է բարդում. ուրիշ տեսակ էլ անկարելի է սպասել։

Մենք ներողութիւն ենք խնդրում ընթերցողից, որ պիտի խօսենք այնպիսի տարրական բանների մասին, որ գիմնազիօնի երկրորդ դասատան մի դաս է, բայց հարկաւոր է միանգամից ապացուցանել, թէ անբարեխղճութիւն է մի մարդու կողմից խօսել այն լեզուների մասին, որոնց երբէք, երբէք չէ սովորել։ Ինչ որ ասել է Խ. Մ. հին լեզուների մասին, բոլորն էլ սխալ է և աղաւաղած. սորան ասում են ռուսերէն поймалъ быка за рога. այնպէս բռնւում է պարոնի տգիտութիւնը, որ այլ ևս անկարելի կը լինի քողարկել նորան։

Гимназія բառը յուն. gymnos (տկլոր) բառից է կազմուած, ուրեմն մենք ռուսերէն վերջաւորութիւնով պիտի գործածենք. հօ ֆրանսերէն ֆիֆաշ գործածելու չենք։ Բայց եթէ իսկապէս նա յունարէն գիտենար և ոչ դէսից դէնից հարցնելով գրէր, անշուշտ կը գիտենար, որ յունարէն կայ gymnasion—գիմնազիօն բառը, որը ուղղակի նշանակում է ուսումնարան, և միայն այն զանազանութիւնն ունի մեր գիմնազներից, որ այդ «գիմնազիօնում» սովորում էին սկզբում միայն մարմնամարզութիւն (gymnazo—մարզել) և յետոյ գիտութիւն էլ (բանաստեղծութիւն, երաժշտութիւն, փիլիսոփայութիւն, իրաւաբանութիւն և այլն)։ Ուրեմն հայերէն «գիմնազիօն» բառը ուղղակի յունարէնից է առած (լատ. gimnasium). իսկ ժողովուրդը իրան յատուկ բնազդումով կազմել է գիֆաշ բառը, և շատ յաջողակ է թւում մեզ այդ բառակազմութիւնը. դաւառներում՝ ասում են «գիմնազ գնացող տղէք», «գիմնազի շոր», «գիմնազի աշակերտ», ուրեմն գիֆաշ բառի իմ վերջաւորութիւնով գործածելու «յարգելի քաղաքական և սոցիօլօգիական պատճառները» միմիայն Խ. Մ.-ների տգիտութիւնն է։

Իմ վերջաւորութիւնը ռուսական է, ինչպէս կոնսիստօրիա, բիօլօգիա, սոցիօլօգիա և այլն. մենք դէմ լինելով ռուսական լեզուի ընդօրինակութեան, ինքներս այդ բառերը ---իա իմ վերջաւորութիւնով ենք գործածում, ուրեմն մենք մեզ հակասում ենք։

Այդպէս, ամեն բան հակասական է թւում այն մարդուն, որը «քոչի հայերէնից և ---երէն մայեա—փլայեումից» աւելի ոչինչ չը գիտէ։ Իսկ լեզու գիտեցողները լմանում են, որ իմ վերջաւորութիւնը յունական և լատինական է, որ filologia, fysiologia, filosofia և այլն յունական ---իա բառեր են և ոչ ռուսական վերջաւորութիւն. հօ Պլատօնը, Արիստոտէլը և այլն ռուսերէնից չը գողացան այդ վերջաւորութիւնը։ Իսկ այնպիսի գիտութիւնների անունները (biologia, sociologia, antropologia և այլն), որոնք հնում չը կային, առնուած են միջնադարեան լատիներէնից. այդ գիտութիւնները սկսուեցին այն դարերում, երբ բոլոր գիտնական գրուածները լատիներէն էին գրւում։ Իսկ եթէ մեր ժամանակում նոր գիտութիւններ են ծագում, դորանց էլ նոր անուն են տալիս այդ հին բառակազմութեան ձևով կազմուած։

«Կան շատ այնպիսի բառեր, ասում է Խ. Մ., որոնց վերջաւորութիւնը ռուսական է, ինչպէս հօնսիստօրիա (ռուսերէն консисторія, լատ. consistere բառից, ֆր. consistoire), ֆիզիկա, ռուսերէն физика (յունարէն physike). ամենքը այդ (---իա) վերջաւորութիւնով են գործածել»։

Ինչ որ ասած է այստեղ, բոլորը սխալ է և վկայում է պ. Խ. Մ.-ի կատարեալ անտեղեակութիւնը գիտութեան որ և է ճիւղի։ Պատմութիւնից յայտնի է, որ Հռովմում գատաստանական բարձրագոյն աստիճանը կայսրութեան ժամանակ կազմում էր Consistoria Imperatoris ասուած հիմնարկութիւնը, որը մասամբ նման է ռուսական սենատին, այն զանազանութիւնով միայն, որ սենատի վճիռը վերջնական է և նորան վերաքննել անկարելի է, իսկ Cons. Im. վճիռը կարող էր վերաստուգել կայսրը անձամբ։ Եկեղեցիներն էլ Consistoria բառը գործածում են առաջին դարերից սկսեալ։ Ուրեմն Consistoria դասական բառը յունական և լատինական բուն վերջաւորութիւնով, «ռուսական» բառ է դուրս գալիս. ահա ինչ է նշանակում խօսել չը գիտեցած բանի մասին։ Նոյնը և ֆիզիկա բառի մասին, որը լատիներէնում գործածվում է phisica—դասական գարերից։ Բայց պ. Խ. Մ.-ի ասածով՝ այդ էլ ռուսական վերջաւորութիւն է։

Վերջապէս, պ. Խ. Մ. շարունակում է պնդել, թէ լատիներէն accisum—ակցիզում բառ կայ. մենք խնդրում ենք, որ նա ցոյց տայ, ո՞ր հեղինակը, ո՞ւր, և ինչ մտքով

է գործածել այդ բառը և մերկացնէ մեր տգիտութիւնը, հակառակ դէպքում...

Մենք ասել էինք, որ բառերի նշանակութեան մասին էլ հասկացողութիւն չ'ունի պ. Խ. Մ.: Ահա մի նոր ապացոյց մեր ասածին: Առաջին յօդուածում նա մեզ անուանեց միաժամանակ և «պահպանողական», և «պատեհական». սորանից մենք եզրակացնում ենք, որ այդ բառերի և ոչ մինի իմաստը պարոնը չէ հասկանում. մի լրագիր միաժամանակ չէ կարող այդ երկուսը միասին լինել, որովհետև պատեհականութեան և պահպանողականութեան մէջ «սարեր և ձորեր» կան. մենք աւելին կ'ասենք, պատեհականութիւնը, այդ բառի ճիշտ նշանակութիւնով, կատարելապէս բացասում է պահպանողականութեան. պատեհականը, ինչպէս այդ հասկացվում է Ֆրանսիայում, անպատճառ առաջադէմ և շատ անգամ ծայրայեղ արմատական է, ինչպէս օր. Գամբետա, այդ բառի ստեղծողն և այդ կուսակցութեան պարագլուխը. միայն պատեհականը առաջ իւր ծրագրի այն կէտերն է իրագործում, որոնք որոշ դէպքում պոպէհ են, կարող են իրագործուել և հակառակ կուսակցութիւններից աւելի քիչ դիմադրութիւն կը գտնեն:

Բայց պ. Խ. Մ.ի ուղեղում ամենահակառակ գաղափարներ և մտքեր հաշտվում և համաձայնվում են միմեանց հետ: Նորա համար «ազատամիտ, պահպանողական, պատեհական, յետադէմ» և այլ այսպիսի բառեր խաղալիք են դարձել և նորանց ամեն օր գործածում է նա առանց հասկանալու նոցա իմաստը: Իրաւունք չ'ունենք այդպիսի խաղը տղայական անուանել և խաղացողներին տղաներ:

Եւ ահա, այդ պ. Խ. Մ.-ը մեզ ընդ և էջ է համարում, որ նորա յօդուածը անպատասխան թողնինք և իւր լրագրի յաղթութեան փողերը փչում և տօնում: Կրկին մի քանի այդպիսի յաղթութիւններ պ. Խ. Մ. անկոթ գրչով գրած, և «Մշակը»... բոլորովին կը կորցնէ իւր վարկն և վերջին բարոյական ուժերը:

Մենք վերջացրինք մեր խօսքը պ.Խ. Մ.-ի հետ: Այս էլ շատ է տգէտներին, այլ և ոչ մի բառ նորա հետ այս հարցի մասին:

Մենք ցանկանում ենք երկու խօսք ասել «Մշակի» պ. խմբագրին. դիցուք ընթերցողը չը գիտէ, որ պ. Խ. Մ.-ները խօսում են այն առարկայի մասին, որը երբէք չեն ուսումնասիրել: դիցուք ընթերցողն այնքան զարգացած չէ, որ այդ հասկանայ. ինչպէս ինքը թոյլ է տալիս մի այդպիսի գրականական խայտառակութիւն. չէ որ ինքն է պատասխանում հասարակութեան և պատմութեան առջև իւր լրագրի համար:

Յարգեցէք, պարոն, տպագրական խօսքը: Съ печатнымъ словомъ надо обращаться честно, ասում է Ֆօլօլը:

Ի վերջոյ, մենք բողոքում ենք այն զրպարտութեան դէմ, թէ մենք աւելի անձնաւորութիւններով ենք զբաղվում, քան նոցա ասածներով, թէ մենք հայհոյում ենք... այդպիսի բաներ մեր յօդուածների ծրագրից դուրս են: Այս արտօնութիւնը պատկանում է «Մշակին»:

N. N.

***

ՀԱԶԱՐ ԲԱՐԲԱՍԱՆՔԻՆ ՄԻԿ ՊԱՏԱՍԽԱՆ

—

Կրակի առաջ քարն ալ կըճաթի:

Առած:

Ճիշտ երկու տարի դորանից առաջ մի քանի բարեկամք համոզիչ խօսքերով խնդրել էին ինձ, որ ես գրիչ չառնում ձեռքս՝ երգիծաբանական յօդուածներ գրելու դիտմամբ, վասն զի, ասում էին նոքա, մեր ժողովուրդը տակաւին զարգացած չէ. փոխանակ խրատելու և յառի սովորութիւնները փոխելու, և'ս առաւել կատաղում է, երբ տեսնում է իրան հրապարակաւ այպանած: «Ընդայրնեը, ասում էի ես, ձեզ շատ լաւ յայտնի է, որ առիթ տուողը ես չեմ, այլ մի քանի չարանենգ անձինք, որք խօսքով և գործքով վնասում են հասարակաց գործը և ապականում են ժողովրդի բարոյականութիւնը»: Բարեկամներս ինձ պատասխանում էին՝ «մինչ կարդացած չես Կրիլովի Ընդ և Աղռաւնէ առակը. շների վրայ քանի՛ ուշադրութիւն դարձնես, նոքա աւելի կը հաչեն. լռութեամբ անց-կաց նոցա մօտից. նոքա կը հաչեն և կը դադարին. իսկ եթէ ձեր պատերազմը շարունակուի՝ ընդհանուր ազգային գործը կը վնասուի»: Ես պատասխանեցի, որ հայի շները Կրիլովի շների նման չեն. նոքա սկսում են հաչելով, և եթէ նկատեն անցորդի կողմից լռութիւն, կը կարծեն, թէ նա իրանցից վախեցաւ, և այնուհետև կը փորձեն խածնելու և: Բայց որովհետև դուք հաւատացնում էք, որ հասարակական ընդհանուր գործը կարող է վնասուել մեր վէճերէն, ես կը լսեմ ձեր խրատը և գրիչս վայր կը դնեմ: Եւ իրօք էլ այդպէս արի. ճիշդ երկու տարի լռեցի, համբերութեամբ տարի ամեն տեսակ ասէ—կոսէները, բամբասանք, չարախօսութիւններ, և ինչ շահութեայ. հայկական շները լռեցան. ընդհանուր գործը անվրդով մնաց. ճշմարտութիւնը յաղթեց. խաբէութիւնը խայտառակուեցաւ: Սմենևին ոչ: Հայկական շները ոչ միայն չդադարեցան հաչելէ, այլ և խածնելու փորձը սկսան փորձելու. և այս անգամ ոչ Կրիլովի, այլ ֆրանսիական առածը արդարացաւ. «Եթէ գառն կը ձևանաս, գայլերը կ'ուտեն քեզ:» A la guerre comme à la guerre!

—

1879 թիւն էր Նոր-Նախիջևանի հիմնարկութեան տարեդարձը, որն քաղաքացիք կամեցան պատուել մի որ և է նշանաւոր յիշատակարանով: Կային մարդիկ, որոնք ասում էին, թէ պէտք է Ղուկասի հրապարակի մէջ կանգնեցնել Եկատերինէ Բ. կայսրուհու արձանը. միւսները ասում էին, որ պէտք է Յովսէփ Արղութեան կաթողիկոսի

անդրին կանգնեցնել, և շատ այսպիսի արձաններ դնելու առաջարկութիւնները եղան. միմիայն ես էի, որ պնդում էի, թէ պէտք է ազուեստական դպրոց հիմնել, բերանացի և գրաւոր եղանակաւ համոզելով ժողովրդին իմ առաջարկութեան հանրօգտութիւնը: Ժողովրդի բազմութիւնը իմ կարծիքը ընդունեց և քաղաքական ժողովրանի մէջ որոշուեցաւ «Ն. Նախիջևանի հիմնարկութեան հարիւրամեակը անմահացնել, հիմնելով նորա մէջ Արուեստական Դպրոց»: Հայաստանեայց եկեղեցւոյ այժմուս քաջ հովուապետ Մակար Կաթողիկոսը (այն ժամանակուայ Նախիջևանի և Բեսսարաբիոյ Թեմի Առաջնորդը) օրհնեց ժողովրդի որոշումնը և ինձ հաստատեց տեսուչ այդ նորակառոյց դպրոցին: Ինձ համար մահացու մեղք կրհամարէի, եթէ մի վայրկեան մոռացման տալի և միշտ երախտագէտ հոգւով չյիշէի, որ իմ ընտրութեան մէջ մեծապէս նպաստել են Պարոնայք Ս. Յարութիւնեան, Յ. Պապասիմեան, Գ. Տրապիզոնեան, Կ. Ղորչոփեան, Խ. Ձալխուշեան և այլք, որք այդ միջոցին մասամբ իւրք համակրում էին իմ վիճակին և մասամբ էլ ինչ ու ինչ արժանաւորութիւնք գնահատում էին իմ մէջ: Այժմ, ցաւելով սիրտ խոստովանեմ, մի քանիսը այս պարոններէն երեսները դարձուցել են ինձմէն և նոցա առաջուայ բարեկամական յարաբերութիւնը փոխուել է թշնամականի..... Այդ փոխադարձ թշնամութեան պատճառն աւելորդ եմ համարում այս անգամ բացատրել, բայց գիտցողը գիտէ և մեղադրում է ոչ ինձ: Ինչ և իցէ:

Ինններորդ տարին է ուրեմն, որ ես կառավարում եմ Նախիջևանի Արուեստական Դպրոցը: Այս միջոցիս չորս անգամ տեղի ունեցաւ աշակերտաց ուսման աւարտումն, և դպրոցը այդ չորս նուագին ընծայեց հասարակութեան երեսուն ուսումնասիրտ սաներ, որոնք այժմ մեծաւ մասամբ զբաղուած են իրանց սովորած մասնագիտական արուեստներով (Հիւսնութիւն, երկաթագործութիւն, կօշկակարութիւն) և համեստ կեանք վարում են. մէջերը կան և այնպիսիք, որոնք իրանց էքսաւոր ծնօղների և ընտանիքի ապրուստն են հայթհայթում: Ջմռանաք, որ այդ ուսումնասիրտք 16—20 տարեկան պատանիներ են: Թերևս մեծարդոյ կարդացողը ինձ կըհարցնէ՝ «ինչ է պատճառը, որ Ա. Դպրոցի ուսումնասիրտների թիւը սակի չէ:» Ա.Հա դորա պատճառը: Ա. Դպրոցի աշակերտք, առանց բացառութեան, լինելով ամենաչքաւոր մարդոց զաւակներ, շատ անգամ 2—3 տարի միայն մնալով դպրոցիս մէջ, իրանց ծնողների ստիպմամբը թողնում են ուսումնարանը և ամսական 3, 4 և երբեմն 8 ռուբլի վարձով մտնում են մասնաւոր արուեստաւորների կրպակներ և իրանց ստացած ուռճիկը տալիս են սովալլուկ ծնօղաց: Եթէ այս ձախորդ պարագան չըլինէր, իմ հաշուով, Արուեստական Դպրոցի ուսումնասիրտ սաների թիւը արդէն հարիւրի պիտի հասնէր: Այնու ամենայնիւ, համարձակ կարող եմ ասել, որ Նախիջևանի մասնաւոր արուեստանոցները մեծաւ մասամբ լցուած են ինձ ըստանձնած դպրոցի ուսումնասիրտներով և կիսաւարտնեբով. իսկ եթէ վերջինքը Ա. Դպրոց 2—3 տարի յաճախած չըլինէին, այդ բաղդէն ևս զրկուած պիտի լինէին և այս օրս, Հարկաւ, անգործ—պարապ թափառէին քաղաքիս ցնոտ և փոշոտ փողոցներում ու շուկաներում և մուրայլին:

Արուեստական Դպրոցը չըբացուած, Ն. Նախիջևանի փողոցները լիքն էին մանր ստահակ տղոցմով, որոնք առաւօտեանէ մինչև երեկոյ կեղտոտութեամբ, լկտի խաղերով զբաղուած էին: Չէնց որ գետը (Դօն) ազատվում էր սառուցէն, նոքա տարմով գետափին (եալի) էին գնում և այնտեղ հազար տեսակ անբարոյականութիւն էին սովորում: Աղաւնի քշել, հաւ ու բադ գողանալ, Հարևանի տան կտրի կղմինտրները և պատուհանի ապակիները կոտրատել, այս խիստ սովորական և սիրելի զբաղմունքն էր նոցա: Տարին—տարեկան Դօն գետի մէջ 8—12 տարեկան հայ երեխայքի խեղդուելը մի շատ հասարակ բան էր: Այս օրս այդ արտասուելի երևոյթը, Արուեստական Դպրոցի շնորհով, գրեթէ անհետացել է. երբեմնապէս միայն լըսվում է այս կամ այն ինչ ռուս տղի խեղդուելը:

Արուեստական Դպրոցի աշակերտները վերը յիշած «պարոններէն» էին: Ո՞րքան աշխատանք պէտք էր թափել դոցա վրայ—այդ միայն վառ երևակայութեամբ ձօնած մարդը կարող է հասկանալ, խօսքով բացատրելը անհնար է: Այժմ հազիւ երբէք կըդտնես քաղաքիս մէջ այդպիսի տղայք. նոցա մեծադոյն մասը, Արուեստական Դպրոց մտնելով, մի որ և է բարի ուղղութիւն ստացաւ:

Քսաներկու տարուայ փորձը ինձ ապացուցեց (Նախիջևան տեղափոխուեցայ 1866 թուականին), որ Նոր-Նախիջևանը, իւր տեղական պայմանների շնորհով, ամենևին չի ենթարկվում այն պահանջներին, որն որ իդէալական ծրագիրները դնում են վարժապետների և մանկավարժների վրայ: Եթէ ուրիշ հայաբնակ քաղաքներ էլ ունին իրանց անյարմարութիւնները, Նախիջևանը ոտքով—դլխով խրուած է այդ ձախողակ պայմանների մէջ: Թէ ժողովրդի առօրեայ զբաղմունքը, թէ նորա աւանդութիւնները (զանցայ), թէ դաղափարները, թէ քաղաքի դրութիւնը, թէ տարուայ եղանակները, միով բանիւ ամենը, ամենը իրար հետ այնպէս կապուած են, որ քաղաքիս մէջ դարգացող երեխան, ասես թէ, անպատճառ զոհուած է բարոյական կոբստի, եթէ միայն կողմնակի հզօր պարագաներ օգնութեան չը հասնեն կամ երեխայոց և կամ նոցա ծնողաց: Ժողովուրդը երկու կերպ է նայում ուսումնարանի վրայ, նախ՝ իբրև իւր ստահակ (չոչխապա) զաւակի ժամանակաւոր «ցուխթհաուզը» և ապա իբրև հարևանցի կարդալ—գրել սովորելու տեղ: Նա ոչ ինքը հաւատում է ուսումնարանի բարոյական ազդեցութեան և օգտին և ոչ համոզում է նոյնը իւր զաւակին: Եթէ իւր ստահակ որդին, վոխանակ տան պատուհանները և կահկարասիքը կոտրատելու և կամ փողոցի փոշիի մէջ թա-

վառելու, օրուայ մէջ մի քանի ժամ Հանդարտ նստէ ուսումնարանում, այս արդէն բաւականին մեծ օգուտ է նորան. իսկ եթէ 3—4 տարուայ ընթացքում նորա որդին խանութի մէջ պէտք եղածի չափ գրել և իմանայ, նա բոլորովին գոհ կը մնայ։ Դորանից աւելի նա պահանջ չունի։ Մեր պատուելի քաղաքացիի աչքում ուսումնական առարկաներով նորա որդու միտքը Հարստացնելը, դասատուի օրինակով և խօսքով առաքինութիւնն սերմանելը նորա սրտի մէջ, գրեթէ ասելորդ և մինչև անգամ վնասակար բաներ են, որք խիստ արգելաւոր են նորա ապագայ յաջողութեանը, այսինքն Հարստանալուն։ Չնարաղէտ լինել վող կուտելում և իմանալ գաղտնիքը շուտ Հարստանալուն—այս է մեր քաղաքի ընդհանուր ձգտումը՝ ծերից սկսեալ մինչև մանչուկը, պառաւից սկսեալ մինչև տասնամեայ աղջիկը։ Առաքինութիւն, բարոյականութիւն, ազգասիրութիւն, աշխատասիրութիւն, արդարամտութիւն և այլն, և այլն, և այլն—այս ամենը ծիծաղելի, արհամարհելի, ցնորական գաղափարներ են ոչ միայն տղէտների, այլ մինչև անգամ մեր տեղական ինթէլլիդէնթներից շատերի աչքումն։ Տեղական Հայկական վարժարաններէս և ոչ մինը ազատ չէ «Հայկական բամբասանքէ», ոչ մինը յարգելի, ակնածելի չէ ոչ ծնօղաց և ոչ աշակերտաց աչքում, և այս ոչ նորա Համար, որ մեր վարժապետները տգէտ են և մեր վարժարանները անպիտան են. ամենևին ոչ։ Նախիջևանում այնպիսի Հայ վարժապետներ կան, որոնք եթէ ուս լինէին՝ վաղուց նոքա մի որ և է դիմնազիոնի վերատեսուչ կը կարզուէին, և ինձ ըստանձնած Արուեստական Դպրոցը լմաոտատարելու և նորա կարգ ու կանոնի Հետ ծանօթանալու Համար քանի քանի անգամ ուղարկուած էին Ոստովից և Քիրմանից (Ղէրքասք) աստիճանաւորները, որ ըստ այն օրինակին իրանց քաղաքների մէջ Հիմնեն և կառավարեն։ Վաղուցուայ յայտնի ճշմարտութիւն է, որ Հայը յարգում է միայն այն կամ նորան, ինչից կամ որից նա ունի երկիւղ, վասն զի նորա Հասկացողութիւնով յարգանքն և երկիւղը մի և նոյն աղբիւրից են բղխում։ Մեր ժողովուրդը յարգել չը գիտէ ոչ արժանաւորութիւն, ոչ գիտութիւն, ոչ առաքինութիւն, ոչ քանքար, ոչ ալեզարդ Հասակ, ոչ ազգային ծէս, ոչ պատմական յիշատակ, նա ոչինչ, ոչինչ և ոչինչ բանէ չի պատկառում, բացի Հզօր ձեռքի մէջ գտնուած Հաստ գաւազանէ և ոսկիով լցուած գրպանէ. թող լինի այդ վերջինը մինչև անգամ երեկուայ աւազակինը, պռունկինը և խարդաւանողինը։

Ահա այսպիսի ձախողակ պարագաների մէջ բացուեցաւ Արուեստական Դպրոցը և լցուեցաւ քաղաքիս այն դասակարգի զաւակներով, որոյ սովորական անունն է դիբտ կամ ցնցոտի մարդկան ազգի։ Ամենավառ երևակայութիւնը կը մթագնի, երբ կամենաս պատկերացնելու 50—60 Հոգի ստահակ երեխայք, որք նոր մտել էին Արուեստական Դպրոց։ Ոչ մի «թիւռգաւթէն» չէր կարող այն բարոյական ցնցումն անել մարդուս վրայ, ինչ որ կատարում էր իմ վրայ դպրոցիս բացման առաջին ամիսները. ոտերը բոլրկ, ձեռները կեղտոտ, երեսները մրոտ, ականջները փոշիով լցուած, քթերից սեպհական առուներ վազած, դլուխների վրայ դեռացող պատառաբոյծներ, վրաներից և բերաններից շշկլացնող գարշահոտութիւն..... ինչպէս նոր որսացած վայրի գաղանների կորիւններ՝ անդադար միմեանց վրայ մրմռացող, իրար բթբթող, վայրագ ժպրկի աչքերով վարժապետների վրայ նայող..... Աստուած իմ, Աստուած իմ, ինչ որ ես քաշել եմ (քանի որ նեարդերս տակաւին բթացած չէին), այն արենարբու թշնամիիս չեմ ցանկանում։ Այս աշակերտաց կողմանէ։

Այժմ խօսենք ինձ շրջապատող դործողների վրայ. բայց այս մասին ես խօսքս կարճ կը կտրեմ, որ «սադերին չի դրգռեմ»։

Դպրոցիս բացման գրեթէ առաջին օրերը քաղաքիս մէջ բաւականին խոշոր դեր խաղացող մարդ մի ընկերական ժողովում ասել է՝ «մենք Պատկանեանին այնպիսի մարդոցմով շրջապատեցինք, որ նա ոչ աչ կարող է ծռուել և ոչ ձախ, այսինքն նորա ձեռք ու ոտքը կապեցինք, նորա ազատութիւնը բոլորովին խլեցինք։

Այս նենդ խօսքերի իմաստը Հասկացնելու Համար՝ ես ձեզ մի բան պատմեմ, որ շատ սովորական երևոյթ է մեր առօրեայ կենցաղում։

Ամենին յայտնի է, որ մեր ժողովուրդը, բացի փող կուտելու միջոցէն, ամենայն ինչ մարդկային գործունէութիւն, ամենայն ինձ ձկտումն և աշխատանք, ամենայն Հասարակական Հաստատութիւն Համարում է խաղ, կատակ և զբօսանք։ Եթէ նա երէցփոխ է, նա ոչ թէ Հետամուտ է եկեղեցւոյ բարգաւաճութեան, այլ իւր զբօսանքի Համար քահանաներին իրար Հետ կռուեցնում է, ժամակոչներին դրդում է տիրացուների դէմ, ժողովրդին դանգատեցնում է առաջնորդի դէմ և այլն. եթէ նա մի որ և է վարժարանի Հոգաբարձու է, դարձեալ նա չի Հոգս տանում իւր ըստանձնած դործի ծաղկմանը (և ինչպէս պիտի կարողանայ մի տգէտ մարդ գիտութեան և բարոյականութեան Հովանաւոր Հանդիսանալու), այլ իւր զբօսանքի Համար ուսուցչաց դէմ ինթռիգաներ է սարքում, վարժապետներ է Հանում ու մտցնում, խորհրդարանի մէջ խօսածներն է ձախ ու ծուռ պատմում փողոցներում ու շուկաներում. եթէ նա քաղաքական վարչութեան անդամ է, քաղաքացիների տակ ցերեկ կէսօրին է պտտ. եթէ նա..... էհ, էլ որն ասեմ. նա ամեն բանի մէջ, ուր որ կարող է մուտք ունենալ, մտցնում է, իւր զբօսանքի Համար, խառնակութիւն, պղտորութիւն և մրտանք։

Երբոր Արուեստականի Դպրոցի տեսուչը նշանակուեցաւ, ինձ էլ շրջապատեցին այնպիսի պայմաններով, որ տարին—տասներկու—ամիս, շներէն հալածուած էրէի նման էի անցնում. ուր և դարձնէի աչքս, ամեն տեղ տեսնում էի լրտեսներ, քսուներ, մատնիչներ, դաւադիրներ..... Յետ

ոչ սակաւուց տեղի ունեցաւ կանոնաւոր և երկարժամանակեայ պատրաստած ապստամբութիւն վարժապետների, վերակացուների և աշակերտների իմ դէմ... ես հիւանդացայ. ձախ ոտքս և ձախ ձեռքս կաթուածահարուեցան.... բժիշկների խորհրդով ստիպուած եղայ այն ամառը Տաք-Ջրում անցնելու: Նախախնամութիւնը խղճացաւ ևթէ ոչ ինձ, գէթ իմ անմեղ զաւակների վրայ: (Այդ օրհասական օրը երկինք ընծայել էին Աշոտ որդուս. դեղեցիկ շնորհաւորութիւն չէր վարժապետացս վարմունքը).....

Սակայն թշնամիներիս ցանկութիւնը չը կատարուեցաւ. ես չկործանուեցայ. չը գլորուելով ինքս, գլորուել չթողի նա և Արուեստական Դպրոցը, վասնզի թշնամիները ոչ այնքան իմ կորստին էին հետամուտ, որքան դպրոցին, որ յարաժամ նոցա «աչքի փուշն» է: Ես սուտ— ազնիւ չը ձևացայ. չը կեղծեցի իմ անձնասիրութեան մէջ վիրաւորուած և հրաժարականս չի տուի, ինչպէս որ յոյս ունէին «շախաճինները». ես չվախեցայ թշնամիներէս. նոցա դաւադրութեան դէմ դրի իմ անկեղծ սէրը դէպի ազգս, նոցա նենգութեան դէմ դրի այն հաւատը, որն ունէի դէպի իմ կառավարած դպրոցը. ես չթողուցի, որ թշնամիք ոտնակոխ, ծաղր ու ծանակ անէին հասարակական գործը և յետոյ, դառնալով դէպի դիւրահաւան, պարզամիտ ժողովուրդը, ասէին. «Մենք շատ լաւ գիտէինք, որ Ն. Պատկանեանը միայն լեզուով է քաջ և ամեն բան անող, իսկ արդեամբ անընդունակ է որ և է օգտաւէտ գործի»: Թշնամիքս խարուեցան իրանց յոյսերում. ես անյողդողդ և հաստատուն մնացի թէ տեղումս և թէ սկզբանցս մէջ. ձեռքէս բաց չթողի հասարակական գործի վարչութեան սանձերը, նոցա (թշնամիներին) տեղի չի տուի ուրախանալու: Եւ Արուեստական Դպրոցը մնաց յարատանի:

Այժմ, գիտեմ, անպատճառ կ'հարցնեն ինձ, թէ ինչո՞ւ մարդիկ ցանկանում են կործանել Արուեստական Դպրոցը, ինչ վնաս տուել է նա նոցա և կամ՝ ինչո՞վ վատ է յառաջանում և կամ՝ որին օգուտ կ'լինի նորա կործանումնէն:

Այս հարցմունքին պատասխանելով, ես պատասխանած կ'լինիմ նա և այն հազար ու մէկ բամբասանքին, որոնցմով մի լրագիր (որի անունը յիշելը «Արձագանք» և «Մշակ» իրանց համար մեծ անպատուութիւն են համարում) իւր սուրբ պարտքն է համարել լցնել իմ մասին իւր անբովանդակ թերթի սիւնակները:

Վաղուց, վաղուց և շատ վաղուց նկատած է մեր հայկական կեանքի մէջ, որ մեր, հայերուս սիրտը սաստիկ տրտմում է, մեր հոգին վրդովվում է, մեր աչքերէն քունը իսպառ փախչում է, երբ նկատում ենք, որ մեր համազգիի բարի գործը յառաջանում է, երբ մենք համոզվում ենք, որ այդ բարի գործի շնորհով մի օր նա պիտի արժանանայ ազգի երախտագիտութեան, իւր ետեւէն բարի անուն պիտի թողնէ..... Այս երևոյթի անունը ինչ է. այս երևոյթի պատճառը ինչ է..... Լեզուս հրաժարվում է պատասխանելու:

Եթէ ես լինէի դող, աւազակ, մարդասպան և կամ՝ խաղամոլ, սրբեցող, վատշուեր, եթէ ես բանալի խաբակաբ (кабакъ), իմ համազգի եղբարք չէին տրտմիլ, չէին բարկանալ, չէին պախարակիլ ինձ այնքան, որքան տրտմեցան, բարկացան և հայհոյեցին ինձ, երբ ես ելուի կանգնեցայ մի հանրօգուտ ձեռնարկի և անակնուելի յաջողութեամբ յառաջ տարի գործը: Փոխանակ խրախուսելու, սկսան ամեն քայլափոխիս վհատեցնելու, փոխանակ օգնելու, հազար ու բիւր ծակուծուկերից յայտնապես և գաղտնապես վնասում էին, փոխանակ մխիթարելու, հոգիս անդուլ տանջանքի մէջ էին պահում: Գործի հէնց սկզբում գուշակում էին ինձ անյաջողութիւն, կործանումն և խայտառակութիւն. և երբ այդ ամեն չար գուշակութիւնք տեղի չունեցան, այն ժամանակ նոքա ձեռք առին բամբասանք, ստութիւն, չարախօսութիւն, ճերմակը սև կոչել, բարին չար և այլն: Ինչո՞ւ: Ձեմ հասկանում: Ձէ, այնպէս չասացի, հասկանում եմ, և շատ լաւ հասկանում եմ, բայց ասել չեմ կարող, վասն զի ամաչում եմ իմ համազգիների համար: Իմ չարակամները չդադարեցան ինձ, կամ աւելի ճիշդ ասեմ, իմ ձեռքում գտնուած գործը հալածելէն. նոքա կատաղում էին, ինքները իրանց մէսն էին կրծում, մտածելով թէ՝ «մենք որ մեր ձեռքով Անիի պէս հոյակապ հաղարումի— եկեղեցեաց քաղաք ենք կործանել, մենք որ թագաւորներ ենք խորտակել, մ'թէ չենք կարող մի փոքրիկ արուեստական դպրոց քանդելու և մի անունշան խափայէլ Պատկանեան գլորելու».....

Ընթերցող, ահա քո առջև եղելութեան ճիշդ պատկերը նկարեցի. մնացածը դու ինքդ հասկացիր:

Իմ չարակամները չորս տեսակի են բաժանվում: Առաջին տեսակինը նոքա են, որոնք հնացած, փտած և ապագայ կորուսած ազգի ամեն մոլութիւնները ունէին իրանց մէջ. զուրկ կրօնէ, զուրկ բարոյականութիւնէ, հաւատները կորուսած թէ դէպի իրանց անձը և թէ դէպի մարդկութիւնը, նախանձոտ աչքով նայող ամեն մարդու վրայ, որն որ և է ձգտումն ունի դէպի բարին, դէպի գեղեցիկը և դէպի ազնիւը. կեղծաւորներ, խարդախներ, գաւաճաններ. ամենայն ինչ կործանողք առանց որ և է անձնական շահի կամ պէտքի. պղծողք ամենայն ինչ, որ նուիրական է. չօժարք իրանց մի աչքէն դրկուելու, պայմանաւ որ ընկերը իւր երկու աչքէն ևս դրկուի: Այսպիսիք ինձ ատում էին շատ հասկանալի պատճառով. կեանքիս ամենագեղեցիկ մասը ես զոհեցի պոցա հետ մաքառելով, չարաչար խարազանելով և անխնայաբար վայր կործանելով նոցա անարժանապէս տիրապետած դահոյքներէն:

Իմ երկրորդ տեսակի թշնամիները նոքա են, որոնց համար տասն լիր դար առաջ ասած է՝ «ոչ գիտեն գինչ գործեն». սոցա հաւաքական անունը «չսաւնիճազանճ» է: Այսպիսիք ոչ կամք ունին, ոչ խելք, ոչ դատողութիւն և ոչ բերաններումը խօսք: Միքա կրկնում են այն, ինչ որ առաջին տեսակի թշնամիներս ասում են. սոքա անում

են այն, ինչ որ առաջինք աչքով-ունքով ցոյց են տալիս: Ես սոցա ոչ մեղադրում եմ և ոչ հետերը պատերազմում: Ի՞նչ շահ կայ գայլերի վոհմակին կամ ոչխարների հօտին իրատ տալու, յանդիմանելու կամ հետերը վէճ բանալու:

Երրորդ տեսակի իմ չարակամներն են այն ողորմելի պատառաբոյծ quasi—գիտնականներն, որոնք Նախիջևան ոտքերը դրած-չի դրած, մտնում են ի շարս ժամակոչնեերին, տիրացուներին և այն Թշուառ եկեղեցական պաշտօնեաներին, որոց վրայ տգէտ, աշխարհակեր վաճառականը նայում է բարձրից, արհամարհանքով, մինչև անգամ նոցա իւր կառապանից (кучеръ) ստոր դնելով: Այս պատառաբոյծները, թէև, այո, խելքէ և հասկացողութենէ զուրկ չեն, բայց զուրկ են բարոյական դաստիարակութենէ, ուրեմն ոչինչ համոզմունք, ոչինչ հաստատուն կարծիք և հաւատ չունին. վաղուց հացի պակասութիւնը նոցա սարսափեցնում է, և նոքա, շան նման, աչքերը տեղական հզօրների (իմա՛ հարուստների) վրայ դարձուցած՝ ամեն րոպէ մի պատառ հաց են սպասում, և (ցաւ է արտասանելը) նոցա դրդումին (наускиваніе) ուշք դնելով, միշտ պատրաստ են, հակառակ իրանց մէջ նշխարուած խղճմտանքին, կատաղաբար յարձակուել ամեն անմեղ մարդու վրայ, հայհոյել, կազկանձել և խածնել..... Արդարև, ցաւալի երևոյթ է մեր ազգի սերնդի մէջ այնպիսի անհատների ներկայութիւնը, որոնք անձամբ կենդանի ապացոյց են, իբր թէ լուսաւորութիւնն է (այսինքն թերուսութիւնն) պատճառը, որ սոքա հասել են այդ թշուառ վիճակին: Ազգասէր, շողոքորդ, դաստիարակիչ, սուտ-վկայ, թատերասէր, դաւաճան, փիլիսոփայ, խարդախ, թարգմանիչ, քսու—որը կամենաք. այս թշուառ պարոնները ամեն օր պատրաստ են այդ դիմակները դնելու իրանց անամօթ երեսներին.....

Ի՞նչպէս կարող էի ես այսպիսի պարոնների հետ հաշտ ապրելու, նոցա չհալածելու, չխայտառակելու, երբ տեսնում էի նոցա անընդունակ ո՛ր և է լաւ գործի և ընտիր ու պատրաստ անօթ ամենայն վատթար և ստոր արարքի:

Իմ չորրորդ թշնամին նա է, որի անունը անգամ արտասանել ամաչում եմ և որին ճանաչում է բոլոր հայ կարդացող դասակարգը, թէև նորա գրուածքը չի կարդում.....

Աւել ոչինչ ասելիք չունիմ:

Նոր-Նախիջևան. 4 Սեպտեմբերի, 1888 թ.

Յովհաննէս Պապիկեան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ա—Սրբազան պատմութիւն, հին ուխտի, աշակերտաց և աշակերտուհեաց համար:

Հատոր Ա. Աշխատասիրեց Սահակ քահանայ Սահակեանց:

Տփխիս. 1888 թ. տպարան Յ. Մարտիրոսեանցի. 22 հրատարակութիւն «Թիֆլիզի ընկ. հայերէն գրքերի հրատարակութեան». 8° 182 երես, գինն է 30 կ:

Բ.—Դասագիրք Կրօնի, ուղեցոյց հայ կրօնուսուցչների համար, հին—ուխտի Նիւթի մշակութիւնը, հատոր Ա., Դասախօսեց Ներսիսեան Դպրանոցի ստորին դասատան աշակերտներին Սահակ քահանայ Սահակեանց. Տփխիս, տպ. Մ. Թօփինեանի. 1888 թ., 8°. 484 երես. գինն է 1 ռ. 75 կ.

II° 23 հրատարակութիւն «Թիֆլ. ընկ. հ. գրքերի հրատարակութեան:

Կատարելով մեր խոստումն, ահա դառնում ենք Սրբազան պատմութեան այն դասագրքին, որի մասին մեր անցեալ յօդուածում ակնարկել էինք: Նախ քան այս գրքի մասին խօսելը, կարևոր ենք համարում քանի մի ծանօթութիւններ, որովհետև այս դասագիրքը մեր գրականութեան մէջ մի նոր ուղղութիւն է ներկայացնում՝ վերաբերութեամբ կրօնի ուսուցման: Մի տասնեակ տարիից աւելի է, որ մեր գրականութեան մէջ մեծ աղմուկ հանեց և նորանշան կերպով տարածուեց մանկավարժական մի ուղղութիւն և, զարմանալով պէտք է ասել, թէ այս նոր ուղղութիւնը մեծ բազմութեան հաւանութեանն արժանացաւ: Այդ մանկավարժութեան հետևողներին երկու խմբի կարելի է բաժանել, նոքա, որ մեր երկրում և դպրոցներում պատրաստուեցան, և նոքա, որ դիմեցին այդ մանկավարժութեան հիմնադրի հայրենիքն և այնտեղ, ոգևորուելով իրանց ընտրած գիտութիւնով, պաշար հաւաքեցին և դարձան իրանց հայրենիքում գործելու: Այս երկու խմբերն ևս բաւական ծանօթացրին հայ հասարակութեան իրանց ուղղութեան հետ և մի՛ւս կողմից, գործնական ճանապարհով փորձելով իրանց տեսութիւնը, գրաւեցին դպրոցական գործով զբաղուողների ուշադրութիւնն և համակրութիւնը:

Դժուար չէ գուշակել, որ այդ ուղղութիւնը Herbart—Ziller ուղղութիւնն է, որի առաջին առաքեալն էր մեր երկրում պ. Ս. Մանդինեան, իսկ նորանից յետոյ պ. Ա. Բահլաթրեան, որոնց հետզհետէ յաջորդեցին և ուրիշներն:

Մեր գիտնական գրականութեան ոչ մի ճիւղն այսօր այնքան հարուստ չէ, որքան մանկավարժականն և ի մասնաւորի հերբարտական մանկավարժական ճիւղն: Թերևս հարցնեն, թէ ինչ է պատճառն, որ այդ ուղղութիւնը, որ իւր ծննդավայրում դեռ իշխող դիրք չունի և գրեթէ հալածուած է, այդպէս շատ հետևողներ գտաւ հայերի մէջ և այդպէս տիրապետեց գրեթէ մեր դպրոցներին: Դորա պատասխանն շատ պարզ է. *Herbart-Ziller ուղղութիւնն գիտնական չէ*, բացի հերբարտականից: Պարզենք ասածներս: Որպէս զի մի որ և է տեսութիւն և կամ համակարգութիւն (System) գիտնական արժէք ունենայ և գիտութեան մասն համարուի, պէտք է անշուշտ հիմնուած լինի հիւղ և արդէն ընդհանուր հաւանութիւն գտած գիտնական սկզբունքների վրայ, և որովհետև հերբարտական մանկավարժութիւնն է միայն, որ իւր բոլոր եզրակացու-

թիւններն իբրև դիտութիւն հիմնում է հոգեբանութեան և բարոյագիտութեան վրայ, ուստի և նա միայն իրաւունք ունի գիտնական կոչուելու։ Սովորական մանկավարժական ուղղութիւնները մի գիտնական համակարգութիւն չեն կազմում. նոքա առաւել ժողովածու են փորձերից հանած քանի մի հետևանքների, որոնց սկզբունքներն երբեմն հակասում են միմեանց։ Հետու կերթայինք, եթէ այժմ այս մեծ վիճաբանական խնդրով զբաղուէինք, ուստի մեր նպատակին դիմելու համար բաւականանում ենք այս փոքր ծանօթութիւնով և միայն զոհացնում ենք այն հակառակորդներին, որոնք ասում են. «ինչպէս է, որ Գերմանացիք իրանք չեն ընդունել այդ ուղղութիւնն և հերբարտականութիւնն այնտեղ հալածվում է»։ Այդպիսիները պէտք է իմանան, որ մի ընդարձակ և քաղաքակիրթ աշխարհում, ուր աւանդական դարաւոր հաստատութիւններ կան, դժուար է միշտ հիմնական փոփոխութիւններ մտցնել, մանաւանդ եթէ այդ հին և աւանդական հաստատութիւնները, որոնց դէմ նոր սկզբունքը կռւում է, ունին անհամար լեգիօններ իբրև պաշտպաններ։ Գերմանական ժողովրդական դպրոցն արդէն դարերից ի վեր կազմակերպուած է, այնտեղ գործող սերունդը ուրիշ ուղղութեամբ է պատրաստուած գործելու, ի հարկէ, այդ սերունդն և թերևս նորա յաջորդներն ևս պիտի անցնեն, որ նոր սկզբունքը գործնական կեանքի մէջ մտնի։ Այլ է մեր դրութիւնը. մեր հին և աւանդական ուսուցման ձևն եղել է ոչ—գիտնական և անգամ մեռած էր, երբ յիշեալ նոր սկզբունքը մուտ գործեց, հարկաւ, որ սա պիտի իշխող դիրք ստանար։ Այս մանկավարժական ուղղութեան առաջին և հիմնական սկզբունքն է՝ «Դպրոցը պէտք է բարոյական—էթնական բնաւորութիւններ (Charaktere) պատրաստէ»։

Այս ուղղութեան դպրոցը կոչւում է դաստիարակութեան կամ իրևութեան դպրոց և ոչ թէ Unterricht կամ ճանաչմունք տեղ։ Դպրոցում պէտք է սանիկի ապագայ կամքը պատրաստել և ոչ թէ նորան ընդունակ դարձնել կեանքի այս կամ այն ճիւղի համար. նա չէ սովորում դպրոցում այն հնչիւնները, որոնցով պէտք է հայ ճարէ, այլ այն միջոցները, թէ հայ ճարած ժամանակ և առհասարակ կեանքում ի՞նչպէս պէտք վարուէ, որ նորա իմացած հմտութիւնը իրան և բարոյականութեան (Austoßung և մարդկային օրէնքներին)։ Հերբարտական ժողովրդական դպրոցը կամենում է պատրաստել բարեպաշտ մարդիկ, սակայն ոչ արհեստաւոր, ոչ զինուորական, ոչ հոգևորական և այլն, կեանքի այդ ճիւղերի համար պատրաստութիւնը նա թողնում է մանաւանդ վերջնորդներին, ուր սաներն արդէն իբրև որոշեալ պատրաստութեամբ կեանքի համար պատրաստ անձինք, սովորում են մի որ և է արուեստ կամ արհեստ. նոքա իրանց պատրաստութեամբ կարող են արդէն իւրաքանչիւր մասնագիտութիւն ուսանիլ։

Այն միջոցը, որով այս մանկավարժական ուղղութիւնն իւր նպատակին հասնել է կամենում, որոշում է հոգեբանութիւնը։ Այս գիտութիւնը, որ՝ հերբարտի շնորհիւ, այժմ ահագին ճաւալ է ընդունել և հաստատաբար յառաջադիմում է իբրև մի ճիշդ գիտութիւն, ուսումնասիրելով մեր հոգեկան կեանքը, միջոց է տալիս մեզ ճանաչելու այն ճանապարհները, որոնցով մեր հոգեկան աշխարհը կարելի է հարստացնել և որոնցով կամքին որոշ ուղղութիւն է տրվում։ Ով աւաւել մօտիկ ծանօթութիւն է կամենում ունենալ հերբարտական մանկավարժութեան և հոգեբանութեան, թող կարդայ պ. Ս. Մանդինեանի դասախօսած մանկավարժութիւնն և Ա. Խահաթրեանի հոգեբանութիւնը։ Եզրափակելով մեր ծանօթութիւնը, պիտի ասենք՝ հերբարտ-զիլլերական մանկավարժութիւնն՝ իբրև դպրոցի՝ նպատակ ընդունում է բարոյական—կրօնական բնաւորութիւնների պատրաստութիւնն, և նորա ուսուցման ճանապարհն ցոյց է տալիս հոգեբանութիւնը։—Բարոյական—կրօնական սկզբունքները մեզ աւանդում են բարոյա-

դիտութիւնն և կրօնը։ Կրօնական սկզբունքներն արդէն տուած են մեզ Autoritäten յայտնութեամբ (սուրբ Գիրք), իսկ բարոյականներն ևս ներկայանում են մեզ մարդոց տարբեր պարագաներում, ուստի և այդ աղբիւրներից պէտք է առնել։ Գալով ուսուցման ճանապարհին, հոգեբանութիւնը մեզ այդ պարզ ցոյց է տալիս. մի որ և է նոր մտապատկեր հնի միջոցով է իւրացուցանւում, նոր մտապատկերն այնքան պայծառ է լինում, ինչքան լաւ դիտուած է. նման մտապատկերներից կարելի է միայն գաղափար հանել. ուստի նորը տալու ժամանակ պէտք է հին և ծանօթ մտապատկերները յառաջ մղել (նախապատրաստել), նորը լաւ իւրացնել տալ, ամենայն պարզութեամբ ներկայացնելով. գաղափար հանելու համար՝ համեմատել։

Այստեղից ահա յառաջանում են ուսուցման չորս ձևական աստիճանները. ա. Նախապատրաստութիւն, բ. Աւանդումն, գ. Կապակցութիւն և դ. Համակարգութիւն. սոցա վրայ աւելացնում են և մի ե. աստիճան, որ կոչվում է վարժութեան աստիճան։

Ուրեմն՝ որպէս զի դաստիարակութիւնն արդիւնաւոր լինի, պէտք է հոգեբանութիւնից գծուած այս ճանապարհով ընթանալ և որպէս զի սանիկն պաշար հաւաքի իւր բարոյական կամքի կազմութեան համար և նորա կամքը մի որոշ ուղղութիւն ստանայ, պէտք է նորան տուած նիւթերից միշտ գաղափարներ հանել. սակայն այս ամեն ջանքերը կորած կը լինէին, եթէ այս գաղափարներն առանց կապակցութեան խառն ի խուռն մնային. այս է պատճառը, որ պահանջւում է դարձեալ ուսուցման նիւթի համակենտրոն աւանդելն։ Պարզուում տուած բոլոր նիւթերը միայն միջոց են գաղափարներ հանելու. մենք չը պիտի բաւական լինենք, եթէ աշակերտը նիւթը գիտէ, այլ պիտի նորանից պահանջենք և այդ նիւթից հանած գաղափարը, որ մի օրակ պիտի լինի այն բոլոր գաղափարների, որոնցից պիտի կազմուի սանիկի կամքը. բայց որպէս զի այդպէս լինի, պէտք է իւրաքանչիւր ուսուցման նիւթից հանած գաղափարը ենթարկուի այն բարոյական—կրօնական գաղափարին, որ մենք տալիս ենք, մի խօսքով ամենայն Ուսուցումն և ուսուցման նիւթ պէտք է հպատակին ուսուցման գլխաւոր նպատակին, բարոյական—կրօնական սկզբունքին։

Այս իսկ պատճառով այս մանկավարժական ուղղութիւնն՝ իբրև գլխաւոր առարկայ ուսուցման ժողովրդական դպրոցի՝ ընդունում է այն նիւթը, որից մենք բարոյական—կրօնական գաղափարներն ենք հանում, միւս բոլոր գիտութիւնները կախումն և կապ ունեն նորա հետ միայն։ Ամենայն ուսած նիւթ պիտի ծառայէ տուած գաղափարների պարզութեան և ամրութեան, որպէս զի մի անքակտելի շղթայ կազմուի բոլոր ուսածից. շղթայի այդ օղակներն ամուր կերպով պիտի մէկ մէկու բռնեն, որ և ոչ մի օղակ կորչի և եթէ պէտք լինի՝ այդ շղթայով մի բան կապելու, պէտք է նորա օղակները դիմանան ամենայն մի ձգող ուժի։ Այս ձևով միայն ուսուցումն և կրթութիւնն հասնել կարող է իւր նպատակին, այս ձևով մենք ուսումնարանում կը կազմենք այնպիսի բնաւորութիւն, որի կամքին իշխում են կրօնական—բարոյական գաղափարներն, հարկաւ, այդ կամքը միայն մեր յանկացած ուղղութիւնն ունի և պէտք է կեանքի մէջ իւր հաստատութիւնը ստանայ, կեանքը միայն կարող է այդ հաստատութիւնը տալ, ուսումնարանը միայն հիմքն է ձգում այդ ուղիղ կամքի։

Այս մանկավարժութեան հիմնադիրներն և զարգացնողները չեն բաւականացել այսպիսի գեղեցիկ տեսութեան կազմութեամբ, նոքա ջանացել են և գործնականօրէն հաստատել և փորձել իրանց ասածի ճշմարտութիւնը։ Չանգուցեալ Ցիլլեր ուսուցչապետը Լայպցիգում և Ստոյն Ենայում հիմնել են այսպիսի իրո-

ընդ, ուր իրանց հետևող մանկավարժութեան աշակերտներին ուսուցանելով իրանց ձևով, փորձում են այդ ուղղութեան ճշմարտութիւնն և կեանքի համար պիտանականութիւնը, և ի պատիւ թէ տեսութեան և թէ հիմնադիր մանկավարժների պէտք է ասել, որ հետևանքները գործը պսակել են. այսօր այդ մանկավարժութեան առաքեալներն ամենայն կողմն տարածուած են և գործնական կերպով քարոզում են իրանց ուսած ճանապարհն։

Այդ աշակերտներից մէկն է և մեր գրքի աշխատասիրողն, Ս. քահանայ Սահակեանցը։

Նոյն աշակերտներից մի խումբ հաւաքուած Այգենախի ուսուցչական դպրոցում և օգուտ քաղելով իրանց Լայպցիղի վարժոցի թղթերից և բերանացի աւանդներից կազմել և հրատարակել են վեց տարուան ժողովրդական դպրոցի դասընթացը ըստ հերբարը—ցեղերական ուղղութեան։ Այդ շրջանի մէջ մտել են և ինքնուս հերբարտականներ, որոնք սեպհական համոզմամբ կուսակից են դառել այդ ուղղութեան և ջանացել են նորա չը լուծած խնդիրները լուծել, ահա այսպիսի ոմն է և Դր. Ռ. Չտաուդէն, որ կազմել է հին և նոր ուխտի դասագրքերն և նոցա նախապատրաստութիւնները (Preparation)։ Այս ուղեցոյցի միջոցով ինքն հայր Ս. Սահակեանցն աւանդել է Ն. Դպրոցում սրբազան պատմութիւնն և մշակել է նիւթն հայ աշակերտների համար։ Նորա դասաւանդութեան հետևանքներն գոհացուցիչ են եղել նախ իր համար *) և երկրորդ բոլոր չեռնահաս անչափ, ուստի և իսրախուսուել է իր աշխատանքն հրատարակելու։

*) Տես յառաջաբան Կ. Ուշեցոյցի, եր. IV.

(Կը շարունակուի)։

Ա.

ՓԵԼԻԵՏՕՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՍԻԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԻՍԻՍ—ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԵՐՈՒՄ։

—

Աւելի քան 60 տարի է, որ ամերիկական առաքեալները եռանդով քարոզչութիւն են անում Ասիական Տաճկաստանի և Պարսկաստանի քրիստոնեաների մէջ։

Արևմուտքում՝ Կ. Պօլսից մինչև Զմիռնիայ, արևելքում՝ մինչև Թաւրիզ, Ուրմիա և Խոպահան ընդարձակ տարածուած ցանցը առաքելական գործունէութեան, այն մեծ միջոցները, որ ամերիկացիները ծախսում են այս գործի համար, և զանազան տեսակի ուսումնական հիմնարկութեանց նշանաւոր թիւը,—այս բոլորը ականջ ուշադրութիւն է դարձնում իր վրայ։

Տաճկաստանում և Պարսկաստանում գործող բոլոր ամերիկական առաքելութիւնները պատկանում են մի ընդարձակ ընկերութեան, որ հիմնուել է Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների Բոստոն քաղաքում 1810 թուականին, սկզբում, կածեօք, ս. Աւետարանի ճշմարտութիւնները Հիւսիսային Ամերիկայի սահմաններից դուրս վայրենի—հեթանոսների մէջ տարածելու նպատակով։

Այս ընկերութիւնը, որ կոչվում է «The American Board öt Commissioners for foreiqn missions», բոլորովին մասնաւոր է, չունէ ոչինչ կապ Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների կառավարութեան հետ, չէ ստանում ոչ մի օժանդակութիւն։ Սակայն Արևելքում գործող առաքելութիւնները վայելում են Կ. Պօլսի և Թէյրանի իրանց դեսպանների օգնութիւնը, թէ և պաշտօնապէս,—որքան մեզ յայտնի է,—այս օգնութիւնը տրվում է առաքեալներին իբրև Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների քաղաքացիներին, և ոչ իբրև առանձին հիմնարկութիւն կազմող առաքեալներին։ Ընկերութիւնը կազմուել է մասնաւոր նիւթական միջոցներով և պահպանվում է ընկերութեան անդամների տարեկան տուրքով, Ամերիկայի և մասամբ Եւրոպայի հարուստ անձանց նուէրներով և, վերջապէս, այն եկամուտներով, որ ընկերութիւնը ստանում է գրքեր և լրագիրներ վաճառելուց։

Մենք երկար չեն խօսիլ այս չափազանց հարուստ և ընդարձակ տարածուած ընկերութեան ներքին կազմակերպութեան մասին, և միջոց էլ չունենք ընթերցողին ծանօթացնել նորա ամբողջ բազմակողմանի և լայնարձակ գործունէութեան հետ, գործունէութեան, որ սփռուած է աշխարհիս բոլոր մասերում և ձգտում է դէպի ինքը Ամերիկայից հարիւրաւոր առաքեալներ և տեղացիներից հազարաւոր քարոզիչներ։ Մենք ներկայումս կը շատանանք մի համառօտ տեղեկութեամբ այս ընկերութեան գործունէութեան մասին մեզ մօտիկ Ասիական Տաճկաստանում և Պարսկաստանում, ուր առաքելութիւնները իրանց գործը առաջ են տանում հայերի և ասորի—քաղդէացիների մէջ։ *)

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ։

—

Տաճկական Հայաստանում գործող Առաքելութիւնները, պատկանելով վերոյիշեալ գլխաւոր Ընկերութեան, կազմում են վերջինի մի անկախ ճիւղը, որ յայտնի է Ամերիկական Միութիւն անունով։ Հայերի մէջ գործում են Ընկերութեան և այլ ճիւղեր, ինչպէս օրինակ Կանանց ընկերութիւնը, որ ունի ուսումնարանները Վանում և Բիթլիսում, տարրական կրթութեան ընկերութիւնը »Holtive Cooperative Society» և այլն։ Խօսենք մանրամասնօրէն Ընկերութեան այն ճիւղի գործերի դրութեան մասին, որ գլխաւորապէս աշխատում է Հայաստանում։

Ընկերութեան այս ամենանշանաւոր ճիւղի գործունէութեան սկիզբը հասնում է մինչև 1822 թուականը, այն ժամանակը, երբ Մալթա կղզում հիմնուեց հայերի համար առաջին կայարանը։ Այնտեղ բացուեցին՝ առաջին ուսումնարանն և առաջին տպարանը—հայերէն լեզուով գրքեր հրատարակելու համար։

Մի քանի տարուց յետոյ՝ այդտեղից տեղափոխուելով Զմիւռնիա, ընկերութիւնը, վերջ ’ի վերջոյ, իբրև տեղային կենդրոն ընտրեց Կ. Պօլիսը **)։ Այս ժամանակից սկսած Կ. Պօլսում կենտրոնացած է ընկերութեան արևելեան գործերի վարչութիւնը. այստեղ է ընկերութեան բարձրագոյն և ամենալաւ ուսումնարանը, որ այնքան յայտնի է Եւրոպայում և Տաճկաստանում «Ռոբերթ Քոլլէջ» (Robert’s Colleqe) անունով, այստեղ են այլ և այլ բազմաթիւ կրթական և բարեգործական հիմնարկութիւնները և, վերջապէս, այստեղ է այն ընդարձակ տպարանը, որ ամեն տարի տպում է հազարաւոր կրօնական և գիտնական բովանդակութեամբ գրքեր 6 լեզուով. հայերէն, անգղերէն, յունարէն, տաճկերէն, արաբերէն և բոլղարերէն։

*) Առաքեալների գործունէութեան մասին Պարսկաստանում մեր տեղեկութիւնը կը ներկայացնենք շուտով։

**) Մինչև այն ժամանակ այդտեղ, կարծեմ, ինքը գլխաւոր ընկերութիւնը հիմնած ունէր մի կայարան (Ձիւղ), որ նա յետոյ յանձնեց Միութեան.—գոնէ գլխաւոր ընկերութեան գործունէութիւնը Կ. Պօլսում սկսվում է 1810 Թուականից։ Խմբ.

Իր դրութիւնը Կ. Պօլսում ամրացնելով, Ընկերութիւնն իր գործունէութիւնը տեղափոխեց երկրի խորքերը և 60 տարուայ ընթացքում հետզհետէ իր կայարանների ցանցով ծածկեց Ասիական Տաճկաստանի ամբողջ հիւսիս-արևելեան մասը։ Ներկայումս Ընկերութիւնն ունէ 15 գլխաւոր և 254 երկրորդական կայարաններ, որ բաժանուած են երեք առանձին առաքելութեանց. 1) Արևմտեան տաճկական առաքելութիւն, որի կենտրոնն է Կ. Պօլիսը. 2) Կենտրոնական տաճկական առաքելութիւն, որի կենտրոնն է Այընթափը և 3) Արևելեան տաճկական առաքելութիւն, որի կենտրոնն է Խարբերթը։ Ընկերութեան գործերի գլխաւոր վարչութիւնը, ինչպէս առաջ, այժմ էս Կ. Պօլսումն է։

1) Արևմտեան առաքելութիւնը, բացի Կ. Պօլսից, ունենալով 7 գլխաւոր կայարաններ (Զմիւռնիա, Բրուսա և այլն) և 110 երկրորդականներ, ներկայանում է իբրև ամենաառաջինը թէ քարոզչութեան չափով և թէ առաքեալների և զանազան տեսակ հիմնարկութիւնների թուով։

Բացի վերոյիշեալ Թօքերթ—Հօլէջից, այս առաքելութիւնն ունի. 6 միջնակարգ արական ուսումնարաններ (սեմինարիաներ և դպրոցներ), 9 իգական պիշերօթիկ դպրոցներ, 122 ժողովրդական ուսումնարաններ, 139 վարժապետ, 40 վարժուհի և 5126 աշակերտ և աշակերտուհի։

Այս առաքելութեան պատկանում են 29 եկեղեցի։

Նորա ծախսերը շատ նշանաւոր են. նա 1885 թուականին Ընկերութեան նստել է 77,000 ֆ. օթերլինգ, չը հաշուելով այն, ինչ որ տուել են տեղային համայնքները առաքելութեան գործերի համար։

Այս առաքելութիւնը քարոզում է ոչ միայն հայերի, այլ և յոյների և բուլղարների մէջ։ Վերջինների թիւը, կարծեօք, անհամեմատ շատ է ուսանող երիտասարդութեան մէջ։

2) Կենտրոնական առաքելութիւնն ունի երկու գլխաւոր կայարաններ (Այընթափ և Մարաշ) և 34 երկրորդականներ Հալէբի (Կիլիկիա) Վիլայէթում և հարևան երկրներում։

Այս առաքելութիւնն ունի մի բարձրագոյն ուսումնարան պատանիների համար (դա Կենդրոնական տաճկական քօլլէջն է Այընթափում), 4 միջնակարգ արական ուսումնարաններ (այն թուում է և Մարաշի լեռնաբանական սեմինարիան) և 3 միջնակարգ դպրոցներ աղջիկների համար։ Այս ուսումնարաններն ունին 100-ից աւելի վարժապետներ և վարժուհիներ, 245 աշակերտ և 80 աշակերտուհի։ Առաքելութեան ժողովրդական ուսումնարանների թիւն է 70, աշակերտներինը 3100։

Նա ունի 33 եկեղեցի։ Գործունէութիւնը կատարվում է գրեթէ բացառապէս Կիլիկիայի հայերի մէջ. միայն Այընթափի քօլլէջում կան աշակերտներ ասորի—յակովբականներից։

Ընկերութիւնն այս առաքելութեան վրայ 1885 թուին ծախսել է 29, 160 ֆ. սթերլինգ։

3) Արևելեան առաքելութիւնը, որ իւր նահանգի չափով ամենից նշանաւորն է, ընդգրկում է Ասիական Տաճկաստանի ամբողջ հիւսիս—արևելեան անկիւնը։ Նա ունի 5 գլխաւոր (Խարբերթի, Էրզրում, Վան, Բիթլիս և Մարդին) և 110 երկրորդական կայարաններ։

Ուսումնարանների թիւն այստեղ հետևեալն է. մէկ բարձրագոյն արական դպրոց (Արևելեան տաճկական քօլլէջը Խարբերթում), 12 միջնակարգ արական դպրոցներ (Մարդինի լեռնաբանական սեմինարիան, Վանի, Բիթլիսի, Մալաթիայի և այլ տեղերի հայոց ուսումնարանները), 5 միջնակարգ իգական ուսումնարաններ (Խարբերթի պիշերօթիկ քօլլէջը աղջիկների համար, իգական ուսումնարանները պիշերօթիկ և երթևեկ աշակերտուհիներով Վանում, Բիթլիսում և այլ տեղերում)։ Ժողովրդական արական և իգական ուսումնարանների թիւն է 142։ Այս առաքելութեան աշակերտների և աշակերտուհիների թիւն է. բարձրագոյն և միջնակարգ դպրոցներում մօտ 400 *), միջնակարգ դպրոցներում 178 աղջիկ և ժողովրդական ուսումնարաններում տղայ և աղջիկ 4320 հոգի։ Բոլոր դպրոցների մէջ ուսուցանում են 174 վարժապետ և 34 վարժուհի, թէ ամերիկացիներ և թէ տեղացիներ միասին։

Այս առաքելութեան սլատկանում է 36 եկեղեցի։

Քարոզչութիւնը կատարվում է հայերի մէջ, բացի Մարդինի կայարանի շրջանից, ուր գործը կատարվում է գլխաւորապէս յակովբականների մէջ։

Աչքի առաջ ունենալով գործունէութեան ընդարձակ շրջանը, այս առաքելութեան ծախսը մեծ չէ. 1885 թուին նա ծախսել է 31,950 ֆ. սթերլինգ, և 1,352 ֆ. սթերլինգ էս ծախսել են տեղային բողոքական համայնքները։

Այսպիսով՝ բոլոր երեք առաքելութիւնների գործունէութեան արդասիքը 60 տարուայ ընթացքում հետևեալն է.

I ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ.

ա) Դպրոցներ. բարձրագոյն արական՝ 3, միջնակարգ՝ 22 (սեմինարիաներ և ուսումնարաններ), իգական միջնակարգ՝ (պիշերօթիկ և երթևեկ) 17, ժողովրդական ուսումնարաններ՝ (տղաների և աղջիկների համար) 334։

բ) ուսուցանողներ. պրօֆէսօրներ, վարժապետներ և վարժուհիներ մօտ 590 (ամերիկացի և տեղացի)։

գ) ուսանողներ. բարձրագոյն միջնակարգ դպրոցների աշակերտներ՝ մօտ 1000 հ., միջնակարգ դպրոցների աշակերտուհիներ՝ 744 և ժողովրդական ուսումնարանների տղաներ և տղաներուհիներ՝ 11,700։ Ընդամենը—առաքելութեան 376 հիմնարկութիւնների մէջ է՝ 590 ուսուցանող և 13,450 ուսանող։

II ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ։

ա) Կայարաններ. գլխաւոր՝ 15, երկրորդական՝ 254։

բ) Բողոքական եկեղեցիներ՝ 98 (գլխաւորապէս հայկական)

գ) Ամերիկացի-առաքեալներ՝ 46 տղամարդ, 83 կին։

դ) Տեղացի—առաքեալներ. փաստորներ՝ 61, քարոզիչներ 78, աւետարանականներ, դրամաճառներ և այլ երկրորդական անձինք՝ 60։

Այսպիսով Ամերիկական միութեան բոլոր առաքելութիւնները ձգտում են դէպի իրանց գործը 900-ից աւելի երկու սեռի թէ ամերիկացի և թէ տեղացի գործիչներ քարոզչութեան և կրթութեան ասպարիզում։

Ճատ հետաքրքրական է որոշել բողոքականութիւն ընդունած հայերի թիւը 60 տարուայ ընթացքում. բայց մենք տակաւին չունենք ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ այս մասին։ Ինչ վերաբերում է այն տեղեկութիւններին, որ տալիս են առաքելութեան տարեկան հաշիւները բողոքական համայնքների անդամների թուի մասին,—որպէս մենք առիթ ունեցանք ստուգել տեղն ու տեղը—չեն համապատասխանում իրականին։ Այս սխալները մասամբ ակամայ են լինում, մասամբ դիտակցաբար՝ պատճառներով։

Առաքելութեան 1885 թուի տարեկան հաշուի յօգտով համայնքների անդամների թիւն էր.

---

*) Այս թուի մէջ չէ խարբերթի քօլլէջի տղոցն վեց պատանեքն և սեմինարիաների ու ուսումնարանների երկու տղոցն պատանեքն աշակերտները.

ա) Արևմտեան առաքելութեան մէջ 2,196 հոգի։
բ) Կենտրոնականում 3400 հոգի։
գ) Արևելեանում 2797 հոգի։

Ընդամենը 8393 անդամ կամ 42—45 հազար մարդ երկու սեռից։

Եւելի դժուար է ասել, թէ ամերիկեան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների թուի ո՛ր մասը կարելի է բողոքական համարել։

Առաքելութեան այն հաշիւներում, որ հրատարակւում են, նոյնպէս և մասնաւոր խօսակցութեան ժամանակ՝ առաքեալները սովորաբար զանց են առնում այս հարցը։ Մեր անձնական դիտողութիւններից գալիս ենք հետևեալ եզրակացութեան. ժողովրդական ուսումնարաններում ոչ-բողոքական երեխաների թիւը կիսից պակաս է, միջնակարգ դպրոցներում այլ դաւանութիւններից պատանիների և աղջկանց թիւը մօտ 40 % է, իսկ արական քօլլէջներում այս թիւը արդէն շատ փոքր է (5 %-ից մինչև 10 %), ընդ այսմ ոչ-բողոքականների տոկոսիքը տարէց տարի պակասում է։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՆՈՅԹԸ։

Ժողովրդական ուսումնարանների շարքում կան և խառն ուսումնարաններ, այսինքն երկու սեռի երեխաների միասնական կրթութեան համար, կան և՛ առանձին ուսումնարաններ մանուկների և աղջիկների համար։ Վերջին տեսակի ուսումնարանների թիւը քիչ է. նոքա մեծ մասամբ գտնւում են քաղաքներում, այն ինչ՝ գիւղերում մեծ մասամբ արական ուսումնարաններ են։ Ժողովրդական ուսումնարանների մեծամասնութիւնը գիշերօթիկ աշակերտներ չունէ. բայց կան տարրական ուսումնարաններ աշակերտական օթևաններով, զոր օրինակ 6-ից մինչև 10 տարեկան երեխաների համար Խարբերթի մեծ ուսումնարանը։

Ժողովրդական ուսումնարանների վարժապետներն ու վարժուհիները տեղացիներ են, գրեթէ բացառապէս բողոքականներ, կրթուած առաքելութեան բարձրագոյն և միջնակարգ դպրոցներում։ Դասերը աւանդւում են հայերէն, տաճկերէն կամ արաբերէն լեզուներով, նայելով, թէ ո՛ր լեզուն է աւելի տարածուած երկրում. օրինակի համար Խարբերթում դասերը աւանդւում են տաճկերէն և հայերէն լեզուներով, Վանում, Բիթլիսում և Էրզռումում միմիայն հայերէն լեզուով, իսկ Մարդինում արաբերէն լեզուով և այլն *)։

Ժողովրդական ուսումնարանների ծրագիրը շատ մեծ չէ՝ գրել, կարդալ, թուաբանութեան 4 կանոնները իմանալ և հիմներ երգել, ահա այն, ինչ որ պահանջում է այդ ծրագիրը։ Մի քանի ուսումնարաններում սովորեցնում են և մարմնամարզութիւն, իսկ իգականներում—ձեռագործութիւն։ Հարկաւոր է նկատել, որ ոչ—բողոքականների համար կրօնի դասատուութիւն չը կայ։

Արական միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում դասատուութիւնն և կրթական մասը լինում են առանձին, խիստ կերպով որոշուած մի սիսթեմով, ընդ այսմ տեղային պայմանները, բնակիչների բնաւորութիւնն, կենսական վիճակը և ուրիշ հանգամանքներ ի նկատի չեն առնուում. առ հասարակ առաքեալները նպատակ ունեն ոչ թէ հպատակեցնել շրջապատող դրութեան, այլ վերջինը ենթարկել իրանց հայեացքներին և պահանջներին։ Արական միջնակարգ կրթարաններն են՝ սեմինարիաները և ուսումնարանները։ Նոքա իրարուց որոշվում են դասատուութեան ընթացքով. սեմինարիաները ուսումնարաններից մի փոքր բարձր են։

Ուսումնարանների ծրագիրն ամենուրեք միևնոյնը չէ, սակայն նոյա տարբերութիւնն աննշան է։ Վերցնելով իբրև նմուշ Վանի հայ-բողոքական ուսումնարանը, մենք գոհացուցիչ գաղափար կըստանանք այս տիպարի բոլոր ուսումնարանների դասաւանդման ընթացքի մասին։ Ծրագիրը պարունակում է՝ հայերէն, տաճկերէն և անգղերէն լեզուներ և հետևեալ առարկաները. թուաբանութիւն, ալգեբրա և երկրաչափութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն և Տաճկաստանի աշխարհագրութիւնը, համառօտ համաշխարհային պատմութիւն և Հայաստանի պատմութիւնը, մարդակազմութիւն *), գեղագրութիւն, երգեցողութիւն և մարմնամարզութիւն։ Դասատուութեան լեզուն Վանում, ինչպէս և մեծ մասամբ ուրիշ տեղերում, հայերենն է (Մարդինում՝ արաբերէնը)։ Հայերէն և տաճկերէն լեզուներն աւանդւում են հիմնաւորապէս, նա մանաւանդ առաջինը. անցնում են բանագիտութեան լիակատար դասընթացքը, և հայերէն գրականութեան պատմութիւնը, և ընդ այսմ տեղեկութիւններ են տրվում հայոց գրաբարի մասին։ Անգղերէն լեզուի դասատուութիւնն անցնում է դժուարութեամբ. գործնապէս նորան գրեթէ ոչ մէկը պատանիներից չէ տիրապետում, իսկ դասընթացքը աւարտելուց յետոյ՝ մոռացվում են և համառօտ տեսական տեղեկութիւնները այս լեզուի մասին։ Մաթեմաթիքական և բնական դիտութիւնները աւանդվում են բաւականին մակերևոյթաբար և կրճատած ծրագրով. այսպէս օրինակ՝ ուսումնարանների մեծամասնութեան մէջ հաստատաչափութիւն չէ աւանդվում, ալգեբրի դասընթացքը սահմանափակուած է մինչև 1-ն աստիճանի հաւասարացումն և այլն։ Ընդհանուր աշխարհագրութեան և ընդհանուր պատմութեան դասերն աւանդվում են կրճատած ծրագրով, և հին սիսթեմով անգիր սերտելով։ Ոչ-բողոքականների համար կրօնի դասատուութիւն չը կայ։

Ձեռնարկները, աշխարհագրական քարտէզները, գծագրութիւնն և մանր ընթերցարանները—բացառապէս առաքելութեան հրատարակութիւններ են, որ ուղարկվում են Կ. Պօլսից, ուր նոքա տպագրվում են Ընկերութեան գլխաւոր տպարանում։

Դասաւանդողները, գլխաւորապէս, բողոքականներ են, քօլլէջների և սեմինարիաների նախկին աշակերտներ. սակայն եթէ հնար չէ լինում անհրաժեշտ կրթական կշիռ ունեցող բողոքական վարժապետներ ունենալ, առաքեալները մի քանի առարկաների համար հրաւիրում են և այլ դաւանութեան ուսուցիչներ, բացի քաթօլիկներից։ Տակաւին հաշտուելով այս բանին, իբրև անխուսափելի չարիքի հետ, առաքելութիւնները ձգտում են հեռացնել և այս չարիքը և, անկասկած, մի քանի ժամանակից յետոյ դասաւանդողների ամբողջ խումբը բաղկացած կը լինի լոկ բողոքականներից։

Սեմինարիաների դասընթացքը փոքր ինչ ընդարձակ է. այսպէս՝ նոցա մէջ մտցրած են—կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, բնագիտութիւն և փիլիսոփայութեան ոչ այնքան մեծ դասընթացք, իսկ բողոքականների համար և աստուածաբանութիւն։ Մեզ չի յաջողվել այցելել և ոչ մի սեմինարիա, ուստի չենք կարող ինքնուրոյն եզրակացութիւն անել այդ տեղի դասաւանդութեան մասին։ Բայց դատելով ուրիշ անձանց, ի թիւս որոց և սեմինարիաների նախկին աշակերտների, ասածով, դասատուութիւնը այնտեղ փոքր ինչ բարձր է, քան ուսումնարաններում։ Արհեստներ չեն աւանդվում, և աշակերտները ուսումնա-

*) Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ կան այնպիսի տեղեր, ուր ընկերները բոլորովին չը գիտեն իրանց մայրենի լեզուն, զորօ՛ն են ածում տաճկական, քրդական, իսկ մի քանի տեղերում արաբական լեզուն։

*) Այն ուսումնարաններում, ուր ուսուցիչներին Թուում բժիշկ չը կայ, մարդակազմութիւն չեն աւանդում և սովորաբար փոխարինում են կենդանաբանութեան շատ համառօտ դասատուութեամբ։ Հեղ։

րաններում 6—8 տարի և աւելի մնալուց յետոյ, ոչ մի գործնական գիտութիւն չեն ստանում։

Բոլոր սեմինարիաների և ուսումնարանների գլխում սովորաբար կանգնած են ամերիկացի—առաքելները։ Նրա ղեկավարում են հիմնարկութիւնների կրթական և տնտեսական մասը և դաս են տալիս մի քանի առարկաներ։

Կրթութեան գործում առաքելները գործադրում են մի առանձին սիստեմ, որը, որքան մեզ թւում է, փոքր ինչ սուղ է և խիստ նպաստում է այն հանգամանքին, որ առաքելութեանց ուսումնարանները չեն վայելում տեղային քրիստոնեայ բնակչութեան համակրութիւնը։ Աշակերտների թէ պարապմանց և թէ հանգստութեան բոլոր ժամերը որոշուած են խստութեամբ, ուրախ, աղմկալի խաղեր արտաքսուած են ուսումնարաններից, ամեն ինչ պիտի կատարուի լրջութեանբ և կարգով, ամեն բանում երևում է գաժան խստապահութիւն, որ լաւ չէ ներգաշնակում հայերի ազգային բնաւորութեան, նոցա կեանքի եղանակի և սովորութիւնների հետ։ Այս սիստեմը մինչև այն աստիճան ճնշում է երեխաներին, այնպէս ոպանում է բնաւորութիւնը և մանուկ հասակին չատուկ կենդանութիւնը, որ ամերիկական ուսումնարանը հէնց առաջն նուազ կարմացնում է այցելուին իւր առանձին դրօշմով, որը որոշում է նորան աղքատիկ կազմակերպուած և վատ կառավարուող, ոսկեայն, այսու ամենայնիւ, աւելի ուրախալի տպաւորութիւն գործող ազգային ուսումնարաններից։

Կրթութեան այս սիստեմը ամերիկացիները աւաչ են տանում կարմանալի տոկունութեամբ և, չատակցաբար, մեծ չաջողութեամբ. նա, այդ սիստեմը դրօշմում է խիստ որոշ մի կնիք ամերիքական ուսումնարանների աշակերտների մեծամասնութեան ամբոջ կեանքի վրայ։ Կարծում ենք, որ նա առանց ապրեցութեան չէ անցնում երեխաների և ֆիզիքական կարգապահութեան վերաբերմամբ։ Մեր այցելած ուսումնարանների մեծամասնութեան մէջ մանուկները կարմացնում էին մեզ իրանց անառողջ և անուրախ տեսքով, իրանց անբնական դնացքով, մանկական զուարթութեան բացակայութեամբ։ Ի վերայ այսր ամենայնի, պիտի է ի նկատի ունենալ, որ ուսումնարանների տնտեսական մասը առհասարակ խիստ գոհացուցիչ է։ Առաքելութիւնները իրանց հիմնութիւնների համար սովորաբար ընտրում են բարձրադիր, առողջարար տեղեր. ուսումնարանների և գոլէջների հիմնութիւնները միշտ ընդարձակ են, լուսաւոր և տաք. ուտելիքը, եթէ չասենք հարուստ, գէթ միշտ սննդարար է և թարմ։ Վերջապէս, դասատուութեան ծրագիրը այնքան ընդարձակ չէ, որ անսպասման պահանջի առանձին նստակեաց և շարունակ պարապմունքներ։

(Կըշարունակուի)։

Խմբագիր-հրատարակիչ ԱՒԳԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձական խորհրդարանում սեպտեմբեր ամսոյս 21, լինելու է ճաշուրդ, (առանց կրկնաճրդի) կապալով տալու Դպրոցի պատահնեալ 21 կրպակները, որոնք պատնվում են Ներսիսեան հին Դպրանոցի հանդէպ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան Գիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10-ից 12 ժամն։

ԾԻՐՎԱՆԶԱՏԻ

ԱՐԱՄԲԻՆ

ՎԷՊ

Լոյս տեսաւ առանձին գրքոյկով և վաճառվում է.
ԹԻՖԼԻԶՈՒՄ՝ «կենտրոնական Գրավաճառանոցում»։
» Իշխ. Բէհբուտեանի և Ա. Յովհաննիսեանի լրագրական գործակալութեան մէջ։
Հեղինակի մօտ. Тифлисъ. Ширванзадэ. Редакція „Арцаганкъ“.
ԲԱԴՈՒՄՈՒՄ՝ Աղեքսանդր Աբէլեանի մօտ։
ԳԻՆՆ Է 75 Կ.
Ճան. ծախսով 1 ր.։

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է հայ գրավաճառանոցներում Սահակ քահանայ Սահակեանի հետևեալ աշխատութիւնները—1 «Սբբոցաց պատմութիւն» հին—ուխտի 182 երես. գինն է 30 կոպէկ. ի, Գրացուցակ հրատարակութեանց հայ կրօնուսոյցներին). հին ուխտի պատմութիւնը. 484 երես. գրքի մէջ զետեղուած են 14 պատկերներ, որոնք լուսաբանում են գրքի մէջ եղած մուրհը կէտերը, և երեք հատ քարտէզ։ Գինն է 1 ռ. 75 կոպ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գերման. Թարգմ.

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Նոյն Թարգմանչի

Զմիռլի, Բենիամին Ֆրանկլին, 2 տիպ. . . . . » 40
— Գէորգ Վաշինգտոն 2 տիպ. . . . . » 60
— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . . . 1 »
— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ . . 1 20

(Ճանապարհի ծախքը Թարգմանչի վերայ է)։
Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино—Анановское училище.

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

91-ն Սեպտեմբերի 1888

ՊԱՀԱՆՋ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առհասն թղթադրամ)	92,288—61	81,333—93	173,622—54
2. Ընթացիկ հաշիւ Պետական բանկայի բաժնում	456—74	250,000 —	250,456—74
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ	2,855,133—28	862,594—78	3,717,728—06
4. Զեղջումն մուրհակաց միակ ստորագրութեամբ, ապահոված ապրանքներով	15,500 —	— —	15,500 —
5. Զեղջումն տոկոսաբեր թղթերի, կտրօններու և այլն	20,086—87	2,723—50	22,810—37
6. Փոխատուութիւն գրաւականով՝			
ա) Պետութենից ապահովեալ տոկոսաբեր թղթերի	1,043,195—73	221,785 —	1,264,980—73
բ) » ոչ ապահ. » »	187,624 —	13,000 —	200,624 —
գ) Ապրանքների	— —	79,800 —	79,800 —
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	46,400 —	46,400 —
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	297,584—13	22,017—12	319,601—25
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	39,409—31	3,888—55	43,297—86
9. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւ (Loro)	3,583,998—55	— —	3,583,998—55
բ) Բանկայի հաշիւ (Nostro)	6,268,802—21	— —	6,268,802—21
10. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ	934,463—64	— —	934,463—64
կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ	— —	184,197—54	184,197—54
11. Պայմանաժամը անցուցած փոխատուութիւններ	10,200 —	4,050 —	14,250 —
12. Ընթացիկ ծախսեր	31,436—85	10,302—45	41,739—30
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,461—51	3,009—77	6,471—28
14. Յետ ստացուելիք ծախսեր	13,538—46	1,147—10	14,685—56
Ր. Ա.	15,397,179—89	1,786,249—74	17,183,429—63

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	154,474—72	— —	154,474—72
3. Դրամական ստանդներ՝			
ա) Պայմանաժամով	1,756,143 —	110,114 —	1,866,257 —
բ) ց'պահանջ	242,516 —	10,020 —	252,536 —
գ) Ընթացիկ հաշուով հատաբակ.	751,72,—45	523,518—81	1,275,246—26
» » պայմանաւոր	— —	118,517—60	118,517—60
4. Զեղջումն մուրհակաց Պետական բանկայի Թիֆլիսի բաժնում	322,545—06	— —	322,545—06
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ Պետական բանկայի Թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով	547,000 —	— —	547,000 —
6. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	3,388,998—57	— —	3,388,998—57
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	6,751,523—24	— —	6,751,523—24
7. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ	— —	935,520—74	935,520—74
կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ	177,585—85	— —	177,585—85
8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոններուն բաշխը 1882, 1883, 1884 1885 1886 և 1887 թ.	5,941—71	— —	5,941—71
9. Չ'վճարուած տոկոսներ ստանդներուն, ընթացիկ հաշիւներուն և այլ գործարութեանց	65,805—14	12,751—52	78,556—66
10. Ստացած տոկոսներ և յանձնարարականներ	163,955—71	68,995—31	232,951—02
11. Փոխանցիկ գումարներ	68,963—44	6,811—76	75,775—20
Ր. Ա.	15,397,179—89	1,786,249—74	17,183,429—63

Дозв. Ценз. Тифлисъ, 17 Сентября 1888 г. Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2